Ե· ՏԱՐԻ 1489 ԹՒ. ՀԱՅՑ 4380 ԹԱՂ,ՈՑ 11 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1888 (Ն. Տ.) 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1888 27 ՌԵՊԻՒԼ ԱԽԸՐ 1306

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան
غلطه‌ده نورادونکیان خانده (ارهولك)
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	գահեկան	160
»	»	Վեցամսեայ	80
»	»	Եռամսեայ	40
Գաւառաց	»	Տարեկան	200
»	»	Վեցամսեայ	100
Օտար երկիրներէ	տարեկան	ֆրանք	56
»	»	վեցամսեայ	28

Դուրս ղրկուած լրագրաց [illegible] Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1888

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

Վիէննա, 25 դեկտ.—Սերպիայէն առնուած լուրերն հակասական են. Ըստ ոմանց, նոր Սահմանադրութիւնը պիտի քուէարկուի Մեծ Սքուփշթինայի մէկ նստին մէջ ամբողջովին. ըստ այլոց, իրերն այնչափ հանդարտ չեն ընթանար, և ի մօտոյ ճշմարիտ յեղափոխութիւն մը կրնայ ծագիլ ի Պելկրատ. Ստուգիւ կ'երեւի թէ Միլան Թագաւոր ամեն միջոցներ ձեռք առած է գահէն հրաժարելու համար. Պէտք եղած պաշտօնագիրք պատրաստ են, և վայրկեանէ ի վայրկեան կրնան հաղորդուիլ Սքուփշթինային.— Թագաւորը գահէն պիտի հրաժարի. պատանին Աղեքսանդր Իշխան իւր հօր պիտի յաջորդէ. Խնամակալութիւն մը պիտի հաստատուի ցչափահասութիւն Իշխանին. Խնամակալք պիտի անուանուին, և Նաթալի Թագուհւոյն բացարձակ պիտի արգիլուի Սերպիա վերադառնալ. Այս ամեն արարքները նուիրագործող պաշտօնագիրք յօրինուած և պատրաստուած են.

(Թան)

* *

Վիէննա, 25 դեկտ. — Պուլկարիոյ մէջ Նախարարական տագնապն յառաջ եկաւ Նախարարապետ Պ. Սթամպուլովի դիկտատորական ընթացքէն պատճառաւ, որ իւր պաշտօնակիցներէն միշտ գեր ի վեր դիրք մը կ'ուզէր բռնել. Ցաւալի է որ Պ. Սթամպուլով, որ Պուլկարիոյ Կասպէթթան կամ Կլատսթոնը կրնայ կոչուիլ, բնաւ զիջում չէ ըրած Պ. Սթոյլովի գաղափարաց, որ Նախարարութեան մէջ պահպանողական տարրը կը ներկայացնէր. Պ. Սթոյլովի և Պ. Նաչեւիչի հրաժարմամբ, Նախարարութիւնն այսուհետեւ իրեն դէմ պիտի ունենայ ո՛չ միայն ծայրայեղ արմատական և ռուսասէր կուսակցութիւններն, այլ և միջին դասու չափաւոր կուսակցութիւնն. Ասոր հետեւանքը չի կրնար գուշակուիլ. բայց բովանդակ Պուլկարիոյ մէջ Պ. Սթոյլովէ աւելի հանրային վստահութիւն վայելող մարդ չկայ.

(Թայմզ)

* *

Վիէննա, 24 դեկտ. —Անցեալ շաբթուն վեհ. Սուլթանն օտարազգի դիւանագէտի մը հետ խօսակցել բարեհաճելով, յայտարարեր է թէ Թուրքիա փափաքող է պահպանելու իւր բարեկամական յարաբերութիւններ Եւրոպիոյ հետ, և խաղաղութեան համար աշխատելու. Ցորչափ բացարձակ պատճառներ չկան ուրիշ կերպ ընթացքի մը հետեւելու, Բ. Դուռն արդի զգուշաւոր քաղաքականութենէն չպիտի շեղի.

(Նոյն)

* *

Թայմզին Վիէննայի թղթակիցը, դեկտ. 24 թուով հեռագրով մը, հետեւեալ ճիշդ նկարագրութիւնը կ'ընէ Սերպիոյ կացութեան, որ քաղաքական արդի կացութեան մութ կէտերէն մին կը նկատուի ընդհանրապէս.

«Վիէննայի մէջ շատ մտատանջութիւն կը պատճառէ Սերպիոյ վիճակը. զի չի հասկցուիր թէ Միլան Թագաւոր ի՛նչ խաղ կը խաղայ. Ցաւալի է որ հարկադրուած ենք «խաղ» բառը գործածել սերպիական թագաւորութեան մէջ տեղի ունեցած բաներուն համար, բայց ճշմարտութիւնն այս է թէ Թագաւորն արմատական կուսակցութեան հետ նրբամտութեան խաղ մը սկսած է, յորում յաղթական կրնայ հանդիսանալ կամ ոչ. Երբ Թագաւորը զառաջինն յուզեց Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն՝ իւր ամուսնալուծման դատէն հասարակաց ուշադրութիւնը դարձնելու համար, ամեն ոք հետեւցուց թէ ժողովրդականութիւն շահելու մեծ ճիգ մը կ'ընէ. Տեղի ունեցած ընդհանուր ընտրութիւնք արմատական մեծամասնութիւն մը յառաջ բերին, և Թագաւորը ջնջեց զանոնք, յուսալով թէ նոր ընտրութիւն մը կառավարական մեծամասնութիւն մը պիտի արտադրէ. Ճիշդ հակառակը պատահեցաւ. Արմատական աւելի ստուար մեծամասնութիւն մ'ընտրեցաւ երկրորդ անգամուն. Բայց նոյն միջոցին Թագաւորն երեսս դարձուց յառաջդիմական կուսակցութենէն, զոր առաջին ընտրութեանց մէջ հզօրապէս պաշտպանած էր, և մտեցաւ Պ. Ռիսթիչի, ազատական կուսակցապետին. Այս մարդ Սերպիոյ մէջ Աւստրիոյ հզօրագոյն թշնամին է և Ռուսիոյ բարեկամն. Այն ատենէն գրաւած է թագաւորին բարեհաճութիւնն որ այսօր Սերպիոյ մէջ կացութեան տէրն է Պ. Ռիսթիչ, և չի գիտցուիր ո՛ւր պիտի առաջնորդէ զԹագաւորն. Երկու շաբաթ յառաջ, Պ. Քրիսթիչի Նախարարութիւնը կ'ըսէր թէ Մեծ Սքուփշթինային ընտրութիւնը չի կրնար իրեն դպչիլ, քանի որ առժամեայ ժողով մ'է այս, նոր Սահմանադրութիւնը քուէարկելու համար միայն գումարուած. Բայց Պ. Ռիսթիչ համոզեր է Թագաւորը թէ նոր ժողովը սովորական Խորհրդարանի մը պէս դիտել պէտք է, և մաս մը Արմատականներ, Պ. Ռիսթիչի խորհրդով, խոստացած են յոյժ տալ Թագաւորին եթէ իրենց ուզած ընթացքը բռնէ. Ասոնք աղէկ. բայց Աւստրիոյ պէս մեծ Կայսրութեան մը շահերը փոքրիկ Թագաւորի մը քմահաճոյքէն կախում չեն կրնար ունենալ. Միլան Թագաւոր քանիցս խրատներ լսեց Քալնոքի Կոմսէն իւր իսկ օգտին համար, բայց անտես ըրաւ. Հիմակ հակում կը զգայ ինքզինք վստահելու այն մարդուն որոյ միակ նպատակն է տապալել զինք. Այս պայմանաց մէջ, իւր տապալումն զարմանք չպիտի պատճառէ.»

ՍԹԷՆԼԻ ԵՒ ԷՄԻՆ

ԻՐԵՆՑ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ռուեթէրի Գործակալութեան տեղեկութեանց նայելով, Զանզիպար լուր եկեր է ան սուրհանդակաց միոյն կողմէ, որք երկու ամիս առաջ Ափրիկէի ներսերը ղրկուած էին՝ Պ. Սթէնլիի կամ Էմին փաշայի վրայօք լուր առնելու կարաւաններէն, որք մեծ լճերուն շրջակայ երկրաց հետ հաղորդակցութեան մէջ են.

Այս սուրհանդակ պատմեր է այսպիսի կարաւանի մը, զոր կազմող արաբ վաճառականք Վատէլայէ կուգային, և Ալպէրթ Նիանզա լճին հիւսիսային արեւմտեան եզերքէն մեկնած էին ներկայ տարւոյս ապրիլի վերջն.

Այս արաբ վաճառականք կը պնդեն թէ Պ. Սթէնլի Էմին փաշայի հետ տեսակցեցաւ ի Վատէլայ դէպ ի 20 յունուար 1888. Ի Վատէլայ հասնելուն Պ. Սթէնլի ունէր 330 մարդիկ և շատ մը ռազմամթերք. Ինք և իւր մարդիկ յոյժ յոգնած էին, ճամբան շատ նեղուած էին կարգ մը բանէ զուրկ մնալով. Թշնամի ցեղերուն յարձակումներէն զերծ մնալու համար, Պ. Սթէնլի ճամբան երկարցուցած էր.

Պ. Սթէնլիի հետ գտնուող երկու սպիտակամորթ սպայք քաջառողջ էին. Պ. Սթէնլիի հասած միջոցին, Էմին փաշա ընդհանրապէս լաւ վիճակի մէջ էր, թէեւ իւր եգիպտացի սպայներէն ոմանք դժգոհութիւն կը ցուցնէին, և իւր զօրաց մէկ մասն ալ դասալիք եղած էր. Ուկանտայի և Ունյորոյի սեւամորթ թագաւորք տակաւին թշնամի էին Էմին փաշայի, որ, 1887 նոյեմբեր ամսոյ մէջ, արեւելքէն եկող հրոսակներու արշաւանքն ետ մղել հարկադրուած էր. Փաշային ընդհանուր առողջութիւնը լաւ էր, բայց քանի մը ամիսէ ի վեր աչքի ցաւէ կը նեղուէր.

Պ. Սթէնլի ժամանումէն շաբաթ մը ետքը, Էմին փաշա Լատոյի ճամբով պատգամաւորութիւն մ'ընդունեց է Խարթումի Մէհտիէն, որ ուռուցիկ խօսքերով կը ծանուցանէր թէ որոշած է իսլամութեան ներքեւ նուաճել բովանդակ երկիրը մինչեւ մեծ լճերը, (Նեղոսի ակունքը). Մէհտին Էմին փաշային կը խոստանար թէ իւր կենաց պիտի խնայէ և իրեն հետ լաւ պիտի վարուի եթէ Վատէլայ քաղաքն ու գրաւած բովանդակ երկիրն յանձնէ տեղակալի մը, զոր Խարթումէ պիտի ղրկէ ի մօտոյ, հաւատարիմ զօրաց հետ.

Փաշան և Պ. Սթէնլի չեն պատասխաներ Մէհտիի այս հրաւէրին, և ետ ղրկեր են պատուիրակն, ըսելով թէ Վատէլայի և հասարակածային նահանգաց վարչութիւնն օրինաւոր կերպիւ Էմին փաշային յանձնուած է, որ այս երկիրները Մէհտիին յանձնելէ առաջ, կը սպասէ որ Մէհտին ապացուցանէ այս երկրաց տիրելու իրաւունքը.

Պ. Սթէնլի, Վատէլայ հասնելուն պէս, ջանահնար եղեր է բարեկարգութիւն վերահաստատել զօրաց մէջ, եւ զէնք ու ռազմամթերք բաշխեր է անոնց. Էմին փաշա բացարձակ յայտարարեր է Պ. Սթէնլիի թէ չուզեր Վատէլայէ մեկնիլ իրեն հետ և Եւրոպա վերադառնալ, անպաշտպան թողլով այն ժողովուրդն որ ցարդ հաւատարմապէս հնազանդած էր իրեն, և եթէ ինք դասալիք լինի, այս ժողովուրդ անշուշտ պիտի ենթարկի մոլեռանդ Մէհտիականաց վրէժխնդրութեան. Էմին փաշա յարեր է թէ բոլոր ճամբան, մինչեւ արեւելեան Ափրիկէի եզերքը, շատ վտանգաւոր է ցեղերուն անընդհատ յուզման ու խռովութեան և Մուանկայի սեւամորթ թագաւորին թշնամութեան պատճառաւ. Ապրիլի դէպի կէսը, լուր եկեր է ի Վատէլայ թէ շատ մը Մէհտիական զօրքեր կը յառաջանան դէպ ի Վատէլայ և մեծ լճերու երկիրն.

Ասոր վրայ, Էմին փաշա իւր յառաջապահներուն հրամայեր է Վատէլայ վերադառնալ, և Պ. Սթէնլի սուրհանդակներ ղրկեր է Ուկանտայի և Ունյորոյի սեւամորթ թագաւորներուն. Ապրիլի դէպ ի վերջն, երբ արաբ վաճառականները մեկնեցան Վատէլայէ, Պ. Սթէնլի շատ հոգ կ'ընէր իւր վերջապահ խմբէն լուր չառնելուն համար, և կը պատրաստուէր ղրկել զօրախումբ մը՝ իւր անցած ճամբուն վրայ նոյն վերջապահ խմբին հետքերը փնտռելու. Պ. Սթէնլի կը ջանար համոզել Էմին փաշան որ իրեն հետ Վատէլայէ մեկնի, և ծովեզերք իջնէ.

Երբ արաբ վաճառականք ճամբայ ելան Վատէլայէ, Պ. Սթէնլի արդէն քանի մը սուրհանդակներ ղրկած էր Եւրոպա, իւր ողջամբ ժամանումը ծանուցանելով և իւր ուղեւորութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ տալով. Պ. Սթէնլիի ղրկած սուրհանդակներէն մին ընտրուած էր նոյն սուրհանդակաց մէջէն, զորս Զանզիպարի Եւրոպացի հիւպատոսք ղրկած էին՝ Էմին փաշային իմացնելու թէ զինք ազատելու համար Պ. Սթէնլի կուգայ օգնական խմբով և պաշարներով. Այս զանզիպարցի սուրհանդակներ անկէ ի վեր ի Վատէլայ կը մնային. Արեւելեան եզերքը զանզիպարցի մը ղրկելէն զատ, Պ. Սթէնլի ուրիշ սուրհանդակ մ'ալ ղրկեր է դէպ ի Քոնկօ.

Ռուեթէրի Գործակալութեան անուղղակի աղբիւրէ քաղած այս տեղեկութեանց և Քոնկոյի ճամբով եկած տեղեկութեանց մէջ իրարու հակառակ կէտեր կան, և տակաւին չի կրնար ըսուիլ թէ Պ. Սթէնլիի և Էմին փաշայի այս միջոցիս առողջ և ազատ վիճակի մէջ գտնուիլն հաւաստեօք իմացուած է. Մի կողմէ Օսման Տիկմայի ժամանման պատմութեան և միւս կողմէ Զանզիպարի և Քոնկոյի կրկին ճամբաներով եկող այս մանրամասն պատմութեանց միջեւ վերջնական դատողութիւն մ'ընելու համար, տակաւին նոր լոյսերու, և առաւել ուղղակի, առաւել վստահելի լուրերու կը կարօտինք.

ՄԱՀ ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔՈՎԻ

Կոմս Լօրիս Մելիքով (Լօռու Մելիքեանց), զօրապետ հեծելազօրաց և թիկնապահ Ռուսիոյ կայսեր, մեռաւ ի Նիս.

Հանգուցեալն Հայ էր. 1826ին ծնած էր ի Տփղիս, և 17 տարեկան հասակին մէջ զինուորական ասպարէզը մտնելով, 1847ին Կովկասու բանակին ընդհանուր հրամատար և Փոխարքայ Վորոնցով զօրավարին թիկնապահ եղած էր.

Լօրիս Մելիքով գործօն դեր մ'ունեցաւ 1855ին Խրիմու առեւմտիւրը պատերազմին մէջ, և Կարսի առումէն յետոյ, կառավարիչ անուանեցաւ տեղւոյն.

Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ վերջին պատերազմին ժամանակ, Լօրիս Մելիքով կը հրամայէր Փոքր Ասիոյ մէջ Մուխթար փաշայի դէմ գործող զօրաբանակին, և ան կողմէ պատերազմը վերջացուց յարձակմամբ առնլով Կարսը. 1878ին Կոմսութեան բարձրացաւ.

1879ին, Կոմս Լօրիս Մելիքով Խարքովի կուսակալութեան պաշտօնը կը վարէր. Բայց յաջորդ տարին, ի Փեթերսպուրկ տեղի ունեցած ոճրական դաւադրութեանց պատճառաւ, Զարն իւր մօտ կանչեց զնա, և պետ կարգեց դիկտատորական իշխանութիւններ ունեցող բարձրագոյն Գործադիր Յանձնաժողովոյ մը. Զարն ինքն իսկ կերպիւ մը ստուերի մէջ մնաց իւր այս ընդհանուր տեղակալին առջեւ. Ոչնչականութիւնը զսպելու համար Լօրիս Մելիքովի բոլոր ճիգերը, խստութիւնը ինչպէս և յանդուգն բարենորոգմանք, չարգիլեցին 1881 մարտ 1/19ի դաւադրութիւնն.

Նոյն տարւոյ մայիս ամսուն, Կոմս Լօրիս Մելիքով թողուց ամեն ուղղակի մասնակցութիւն վարչութեան գործերուն, և պահեց Կայսրութեան Խորհրդոյն անդամութեան և Կայսեր թիկնապահութեան պատուաւոր պաշտօնները միայն. [illegible] բոլորովին առանձնական կեանք մը վարեց.

(Թան)

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Սէնի գաւառին, այսինքն Ֆրանսայի կարեւորագոյն գաւառին, որ կեդրոնն է Փարիզ, երեսփոխաններէն մին մահուամբ պակասած լինելով, Պուլանժէականք պատրաստուած են նոր պայքար մը մղել Հանրապետականաց դէմ. Զօր. Պուլանժէ առաջարկած էր ինքզինք ընտրելի ներկայացնել ամեն գաւառի մէջ ուր երեսփոխանական աթոռ մը թափուր մնայ, եւ հետեւապէս, եթէ Սէնի գաւառին մէջ ձեռնպահ կենար, իւր կեդրոնական ազդեցութիւն ծանր հարուած մը կ'ընդունէր. Թէեւ Փարիզի մէջ և անմիջական շրջակայքը Պուլանժէականութիւնն այնչափ զօրաւոր չէ, բայց ֆրանսացի ժողովուրդն այնպիսի յեղակարծ փոփոխամտութեան փորձեր տուած է որ Պուլանժէականք կրնան յուսալ և Հանրապետականք կրնան վախնալ Սէնի գաւառին համար իսկ. Հանրապետականք կ'երեւի թէ ընտրելի պիտի ներկայացնեն զՊ. Օկիւսթ Վաքըրի, մտերիմ բարեկամ և ազգական Վիքթոռ Հիւկոյի, և տնօրէն արմատական Ռափէլ լրագրին. Բայց Պ. Վաքըրի Թոնքինի երկրակալութիւնը պաշտպանելով և արքայական և կայսերական թեկնածուաց արտաքսման հակառակելով անկախ ոգի մը ցոյց տուած լինելուն, չափաւոր Հանրապետականաց եւս ընդունելի կը հանդիսանայ.

ԽՌՈՎՈՒԹԻՒՆ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — ԱՀՌԵԼԻ ԱՐԻՒՆ

Փեթերպուրկ, 26 դեկտ. —Թէհրանէ կը հեռագրուի թէ Թէհրանէ մինչեւ Շահ Ազիմ բանող երկաթուղւոյ կառախմբերէն մին կրակի տրուած է խաժամուժ ամբոխին մէջ ցոյցին հետեւանօք. Ուղեւորք ոմանք կրակներուն մէջ այրած են. Պարսիկ կառավարութիւնն երկաթուղին բանեցնող պելճիքական ընկերութեան ներկայացուցչին 100,000 ֆրանք վճարած է՝ եղած վնասն հատուցանելու համար. Խռովութեան շարժառիթը սա եղած է թէ կառախումբը Պարսիկ մը ջախջախած էր.

Երկրաւոյց Պ. Ճոնսըն կը պնդէ թէ վեց շաբաթէն յառաջ ճիշդ լուր չի կրնար առնուիլ Պ. Սթէնլիէ.

—Վէօրթի պատերազմի դաշտին վրայ, ուր 1870ին Գերմանք առաջին յաղթութիւնը տարին Ֆրանսացւոց դէմ, յիշատակարան մը պիտի կառուցուի Ֆրետերիք կայսեր ի պատիւ.

—Ֆրանց Եօզէֆ կայսեր երկրորդ դուստր Մարի-Վալէրի Արհիդքսուհին նշանուեցաւ Ֆրանսուա Սալվաթոռ Արհիդքսին, որդի Քառլ-Սալվաթոռ Արհիդքսին և թոռ Թոսքանայի Ֆերտինանտ Մեծ Դքսին.

—Վիէննա, 26 դեկտ.— Բրիւնէն կը ծանուցուի թէ Պեսարաբիոյ և Փոտոլիոյ մէջ զօրաց մեծ շարժումներ տեղի կ'ունենան, և Խազախ զօրաց գունդ մը Ռէնի հասած է, Դանուբի վրայ.

—Պիզմարք Իշխան, թէեւ քաջառողջ չէ, Պերլին պիտի վերադառնայ ի մօտոյ, գաղթային-ափրիկեան խնդրոյն վիճաբանութեան մասնակցելու և Կայս. Կառավարութեան քաղաքականութիւնը պարզելու.

ԽՌՈՎԱՑՈՒՑԻՉՔ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պուրկազէ կը ծանուցուի թէ տեղւոյն ոճրագատ ատեանն իւր վճիռն արձակեց Պուրկազի մէջ ապստամբութիւն մը հանել փորձող Չեռնակորացւոց գործին նկատմամբ. Ասոնցմէ մին 15 տարւոյ շղթայակապ աշխատութեան դատապարտեցաւ, ուրիշ չորս անձինք ալ նոյն պատժոյն՝ հնգական տարի. Որովհետեւ Չեռնակորացիք Ռուսիոյ պաշտպանութեան ներքեւ են, և ռուսական պաշտպանեալ շահերն ալ ռուս հիւպատոսաց մեկնելէն ի վեր Ֆրանսայի հիւպատոսաց յանձնուած են Արեւելեան Ռումելիի մէջ, Պուրկազի դատարանին որոշման դէմ բողոք բարձած է ֆրանսական հիւպատոսը.

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Սոֆիա, 25 դեկտ.—Սոպրանիէի Նախագահ Պ. Թոնչեվի դատական Նախա-

—) 13 (—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՌՆ

ՍԵՒ-ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ Զ.

—o—

ՔԱՆԻ ՄԸ ԱՆԲԱՑԱՏՐԵԼԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Եթէ Սկովտիոյ լեռները լեցուն են դիւթական էակներով բարի կամ չար, առաւելապէս խաւարամած ածխահանքերը բնակավայր լինելու էին մինչեւ իրենց վերջին խորութեանց մէջ. Ո՞վ կը դղրդեցնէ ածխահանքը մրրկայոյզ գիշերներուն, ո՞վ երեւան հանել կուտայ նոր երակներ, ո՞վ կը վառէ կրիզուն եւ կը պատրաստէ ահռելի պայթումներն, եթէ ոչ հանքի ոգի մը.

Գէթ այս կարծիքը տարածուած էր այդ աւելորդապաշտ Սկովտիացւոց մէջ. Արդարեւ, հանքահաններուն մեծ մասը կը հաւատային գերբնական զօրութեանց, մինչդեռ իրօք Փիզիքական երեւոյթներ էին ասոնք եւեթ, եւ մարդ վայրապար պիտի յոգնէր անոնց կարծիքները ջրել ուզելով. Նանրահաւատութիւնն ո՞ւր կրնար աւելի ազատօրէն տարածուիլ քան այդ անդունդներուն խորը.

Արդ, Ապըրֆոյլի ածխահանքերն, առասպելներու երկրին մէջ շահագործուելնուն համար, աւելի յարմար էին նիւթ լինելու ամէն գերբնական ենթադրութեանց.

Հետեւաբար առասպելները կը վխտային անդ. Պէտք է ըսել նաեւ թէ ինչ ինչ երեւոյթներ, որք մինչեւ այն ատեն անբացատրելի մնացած էին, նոր պատճառ մը կը լինէին հանրային աւելորդապաշտութեան.

Տօչարդի դուբին նանրահաւատներուն առաջի կարգը կը բռնէր Ճէք Րիան, Հարրիի ընկերը. Գերբնականին ամէնէն մեծ կուսակիցն էր նա. Այդ բոլոր խոլական պատմութիւնները կը փոխէր երգերու, որք մեծ յաղթանակներ կուտային նմա ձմրան տօնութեանց մէջ.

Սակայն Ճէք Րիան չէր միայն աւելորդապաշտը. Իր ընկերներն եւս մեծաբարբառ կը հաստատէին թէ Ապըրֆոյլի դուբերն ոգիներով պաշարուած էին, թէ ինչ ինչ անըմբռնելի էակներ յաճախակի կ'երեւէին անդ, ինչպէս կը պատահէր լեռնային Սկովտիոյ մէջ. Իրենց խօսքին նայելով, արտասովոր բանը այն կը լինէր եթէ այս այսպէս չըլլար. Արդարեւ, այդ խաւարչուտ եւ խորին ածխահանքէն աւելի բարեյարմար տեղ մը կա՞ր ոգիներու, պարիկներու եւ ցնորական տառմներու ուրիշ դերակատարաց բնակութեան համար. Թատերաբեմը բոլորովին պատրաստ էր, ինչո՞ւ համար գերբնական էակները չ'գային անդ խաղալ իրենց դերը.

Այսպէս կը տրամաբանէին Ճէք Րիան եւ իր Ապըրֆոյլի ածխահանքին ընկերները. Ըսուեցաւ թէ զանազան դուբերն իրենց մէջ տեղ հաղորդակից էին ստորերկրեայ երկար նրբանցքներով, որք երակներուն մէջ տեղ բացուած էին. Այսպէս Ստըրլինկի կոմսութեան միջեւ կը գտնուէր ածխին զանգուած մը նրբանցքներով ակօսեալ, խորշերով ծակոտած, քառանկիւններով ճեղքուած, տեսակ մը ստորերկրեայ լաբիւրինթոս որ լայնածաւալ մրջնոցի մը տեսիլը կ'ընծայէր.

Ուստի զանազան դուբերու հանքահաններն յաճախակի կը պատահէին միմեանց, թէ՛ երբ շահագործման աշխատութեանց երթային, թէ՛ երբ վերադառնային անտի. Ասկից միշտ դիւրութիւն ունէին խօսքեր փոխանակելու և մէկ դուբէն ի միւսն շրջաբերելու պատմութիւններ որոց ծագումն առնուած էր ածխահանքէն. Իրենց պատմութիւններն այսպէս կը փոխանցուէին հրաշալի արագութեամբ, բերնէ բերան անցնելով և բնականաբար ստուարանալով.

Սակայն երկու մարդիկ, միւսներէն աւելի ուսեալ և աւելի դրական բնաւորութեան տէր, միշտ դիմադրած էին այդ ընդհանուր հոսանքին. Բնաւ չէին ընդունիր ոգիներու, ուրուականներու և պարիկներու միջամտութիւնը.

Սիմոն Ֆորտն և իր զաւակն էին ասոնք. Եւ ապացուցին զայդ շարունակելով բնակիլ խաւարամած խոռոչին մէջ, Տօչարդի դուբին լքումէն յետոյ. Թերեւս բարին Մաճ հակում մը ունէր դէպի գերբնականն, որպէս ամէն Սկովտուհի լերանց. Բայց հարկադրուած էր ինքն իրեն պատմելու այդ տեսիլքներու պատմութիւնները, բան մը զոր խղճի մտօք կ'ընէր, չկորսնցնելու համար վաղեմի աւանդութիւնները.

Սիմոն և Հարրի Ֆորտ եթէ մինչեւ իսկ իրենց ընկերներուն չափ դիւրահաւատ լինէին, ածխահանքը չ'պիտի թողուին ո՛չ ոգիներուն, ո՛չ պարիկներուն. Նոր երակ մը գտնելու յոյսը դիմադրաւել պիտի տար իրենց ոգիներու ամէն ցնորական խումբ. Մէկ կէտի մը համար միայն դիւրահաւատ էին. չէին կրնար ընդունիլ որ Ապըրֆոյլի ածխահանքը բոլորովին սպառած ըլլայ. Կարելի է իրաւամբ ըսել թէ Սիմոն Ֆորտ և իր զաւակն այս մասին «ածխագործին հաւատքն» ունէին, այդ հաւատքն յԱստուած զոր ոչինչ կրնայ խախտել.

Ասոր համար, տասն տարիէ ի վեր, առանց օր մը զանց ընելու, յամառաբար, իրենց համոզմանց մէջ անդրդուելի, հայրն և որդին կ'առնուին իրենց բրիչը, դաւազանն և կանթեղը. Այսպէս երկուքին ալ կ'երթային, փնտռելով, չոր հարուածով մը ցնցելով ժայռը, մտիկ ընելով թէ նպաստաւոր ձայն մը չէ՞ր տար.

Քանի որ դրամական միջոցներն յառաջ տարուած չէին մինչեւ նախնական գնայսին հատաքարը, Սիմոն և Հարրի Ֆորտ համոզուած էին թէ հետազօտութիւնն, որ այսօր աւելորդ էր, կրնար օգտակար լինել վաղը, և թէ հարկ էր վերսկսիլ զայն. Իրենց կեանքը պիտի անցունէին փորձելով Ապըրֆոյլի ածխահանքին վերադարձնել իր նախկին բարօրութիւնը. Եթէ հայրն ընկնէր յաջողութեան ժամէն առաջ, տղան գործը պիտի վերսկսէր ինքն միայնակ.

Միանգամայն, ածխահանքին այս երկու պահնորդները կ'այցէին զնա իր պահպանութեան տեսակէտով. Ապահով կը լինէին խոռոչներուն մէջ լցուած հողին և կամարներուն հաստատութեան մասին. Կը փնտռէին թէ փլուզման մը երկիւղ կա՞ր, և թէ ստիպողական հարկ կա՞ր լեցնելու փոսին մէկ մասը. Կը քննէին վերին ջրերուն մղման հետքերը, շաւղին կը դարձնէին զայնս, և ջրանցներ շինելով կը տանէին մինչեւ ջրհոր մը. Վերջապէս իրենք զիրենք յօժարակամ պաշտպան և պահապան կարգած էին այս անպտուղ գետնին, ուսկից ելած էին ա՛յնքան հարստութիւններ, որք այժմ ցնդած էին մոխրի ձեւին տակ.

Այդ պտոյտներու միոյն ժամանակ, Հարրի ապշութեամբ դիտեց ինչ ինչ երեւոյթներ որոց բացատրութիւնն ի զուր կը փնտռէր.

Այսպէս, քանի քանի անգամ, երբ անձուկ նրբանցքէ մը կ'անցնէր, իրեն թուեցաւ լսել ձայներ, նման այն ձայներուն զորս խոռոչներուն մէջ լցուած հողին երեսին վրայ զարնուած բրչի ուժգին հարուածներ յառաջ պիտի բերէին.

Հարրի որ չէր սոսկար ո՛չ գերբնականէն, ո՛չ բնականէն, քայլերն երագած էր յանկարծակիի բերելու համար այս խորհրդաւոր աշխատութեան պատճառը.

Նրբանցքն ամայի էր. Երիտասարդ հանքահանը, պատին վրայ պտտցնելով կանթեղը, չտեսաւ բնաւ բրիչի հարուածի ո եւ է նորագոյն հետք. Հարրի կը հարցնէր ինքնին թէ ձայնատածութեան պատրանքի մը, կամ ո եւ է տարօրինակ ու խօլական արձագանգի մը խաղալիկը չէ՞ր լիներ.

Ուրիշ անգամներ, յանկարծակի լոյսն ուղղելով դէպի կասկածելի խոռոչ մը, կարծած էր տեսնել ստուեր մը. Խոյացած էր ընդ առաջ. Ոչինչ, —մինչեւ իսկ երբ ո եւ է ելք թոյլ չէր տար մարդկային էակի մը խուսափիլ իր հալածանքէն.

Ամիս մ'ի վեր երկու անգամ, Հարրի, դուբին արեւմտեան մասն այցելելով, որոշակի իմացաւ հեռաւոր պայթիւններ, որպէս թէ հանքահան մը կը փանկցնէր պայթուցիկ փամփուշտ մը.

Վերջին անգամուն, մանրակրկիտ խուզարկութիւններէ յետոյ, տեսած էր թէ սիւն մը խորտակուած էր բրչի հարուածով մը.

Իր կանթեղին լուսով, Հարրի ուշի ուշով քննեց աւերեալ պատը. Այդ պատը վերջին բերուած լցուած քարերով շինուած չէր, այլ թերթաքարի խաւով մը, որ մինչեւ այդչափ խոր եկած հասած էր գետնածուխի զանգուածին վրայ. Արդեօք այդ հարուածին նպատակն էր նոր երակ մը գտնել եթէ ոչ ուզած էին ածխահանքին այդ մասը փլցնել. Հարրի զայս հարցուց ինքնին, երբ իրողութիւնն հօրը պատմեց. ո՛չ ծերունի գործավարն և ո՛չ ինք կրցան գոհացուցիչ կերպով լուծել խնդիրը.

(Շարունակելի)

բար անուանուելուն վրայ, Նոր ընտրութիւն մը կատարեցաւ և Նախագահ ընտրեցաւ Պ. Զաքարիա Սթոյանով, երբեմն պետ ծայրայեղ արմատական կուսակցութեան, որ ստացաւ 165 քուէ, մինչ 84 քուէ տրուեցաւ դատական Նախորդ Նախարար Պ. Սթօյլովի, որ ստացաւ պահպանողականաց և ամեն ընդդիմադիր խմբակաց քուէներն. Այս քուէարկութեան արդիւնքը կը ցուցնէ թէ Պ. Սթամպուլով ստուար մեծամասնութիւն ունի Սոպրանիէին մէջ։

1889ի պուլկարական Ելմտացոյցն իբր 12 միլիոն Փր.ի բաց կը ցուցնէ, քանի որ հասոյթք են իբր 63 միլիոն Փր. և ծախք 75 միլիոն ([illegible])

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շաբաթ առաւօտ Ելմտական նախարար Վսեմ. Յակոբ փաշայի տունը գնաց ի Բերա և շնորհաւորեց Ն. Վսեմութեան անուան տօնախմբութիւնն ինչպէս նաեւ Ելմտական նախարար անուանումը։

Նոյնպէս Երուսաղեմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան և փոխանորդն՝ Գեր. Սիմէոն Արքեպիսկոպոս շաբաթ առաւօտ Վսեմ. Յակոբ փաշայի տունն երթալով շնորհաւորեցին Ն. վսեմութեան անուան տօնախմբութիւնն ինչպէս նաեւ Ելմտական Նախարար անուանումը։

Ազգային Ժողովն ի Նիստ պիտի գումարի դեկտ. 30ի ուրբաթ օրն ի Մայր եկեղեցի։

Քաղաքական Ժողովն ի Նիստ պիտի գումարի յառաջիկայ չորեքշաբթի ժամ 5ին ի խորհրդարան Ղալաթիոյ։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն այս առթիւ ուղղեալ հրաւիրագրոյ մէջ ցաւ յայտնելով թէ իւր Պատրիարք անուանուած օրէն ի վեր տակաւին պատիւ չէ ունեցած Քաղաքական Ժողովոյ անդամոց մեծամասնութիւնը տեսնելու, մասնաւորաբար խնդրած է որ Ժողովականք հաճին Ժողովոյ Նիստերուն ներկայ գտնուիլ և մասնակցիլ անոր աշխատութեանց։

ԹԱՂԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ Ի ԽԱՍԳԻՒՂ

Խասգիւղի Նոր Թաղական Խորհրդոյն ընտրութիւնն երէկ կատարեցաւ. 155 ընտրողք մասնակցեցան քուէարկութեան. Ինն Թաղականներէն չորսը վերջնապէս ընտրեցան և են

		Քուէ
Եղիա	էֆ. Շահպազեան	133
Կարապետ	» Թիրեաքեան	96
Գաբրիէլ	» Նէշտէրճեան	95
Պետրոս	» Փափազեան	90

Միւս հինգ Թաղականաց ընտրութիւնն համեմատականի մնաց. Աւասիկ կրկին թիւն համեմատականի մնացողներուն.

		Քուէ
Յարութիւն	էֆ. Տէմիրճիպաշեան	74
Պաղտիկ	» Պապաեան	68
Աւետիս	» Պարոնեան	56
Ռուբէն	» Պուլկուրեան	54
Գրիգոր	» Թափարօֆ	52
Գարեգին	» Մելիքեան	48
Սարգիս	» Գավուգճեան	47
Յակոբ	» Սամանճեան	44
Սարգիս	» Պէրպէրեան	35
Բիւզանդ	» Քէչեան	35

Այս վերջնոյն անունը չի կար Թաղին Ընտրողական Ժողովոյն պատրաստած ընտրելեաց եռապատիկ ցանկին մէջ։

Կը լսուի թէ Եղիա էֆ. Շահպազեան և իւր պաշտօնակից Պետրոս էֆ. Փափազեան, իրենց նախկին Թաղականութեան օրով, Ջուլհէ Տիգրանի դատին մէջ Պատրիարքարանի հրահանգաց հակառակ Թաղային [illegible] մը տալով, պաշտօնանկ եղած և երեք տարի ազգային պաշտօն չվարելու դատապարտուած էին. Այս պայմանաժամուն լրանալուն թէպէտ տակաւին 10 ամիս կար, բայց կը լսենք թէ Խասգիւղի քարոզիչ Արժ. Աշոտ վարդապետ, Թաղային նոր ընտրութեան առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետ բարեխօսելով, Ն. Ամենապատուութիւն բարեհաճեր է ներել պատժոյն մնացեալ մասը։

Սամաթիայէն հետեւեալը կը հաղորդեն մեզ այս առաւօտ.

Երէկ, կիւրակէ, Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյն մէջ՝ ի յիշատակ հանգուցեալ Հօր Յակոբեան ազնուաշուք հարազատաց մատուցուած պատարագին և հոգեհանգստեան պաշտօնին Մեծ. Միքայէլ էֆ. Յակոբեան ընտանեօք ներկայ գտնուելէն յետոյ՝ առաջնորդուեցաւ ի Թաղական խորհրդարան, և յետ պատուասիրութեան Թաղական Խորհրդոյ միջոցաւ իրեն ներկայացան երկսեռ վարժարանաց Հոգաբարձութիւնն, Աղքատախնամ ընկերութեան Հիմնադիր Ժողովոյ և Տնօրէն Խորհրդոյ դիւաններն, որք ընկերութեան ինն ամսեայ գործառնութեանց տեղեկագիրն ու հաշուեկշիռն իրենց պաշտօնանին ներկայացուցին և պէտք եղած բացատրութիւնները տուին։

Նոյնպէս տեղւոյն Ս. Սահակեան Սանուց ընկերութեան ներկայացուցիչք իւրեանց յարգանքը մատուցին Ն. Մեծապատուութեան։

Յակոբեան էֆէնտի իւր գոհունակութիւնն յայտնելով Սամաթիոյ Թաղին յառաջդիմութեան համար եղած ամեն կարգի աշխատութեանց մասին, խրախուսեց զիրենք յուսալից բանիւք և յորդորեց շարունակել Թաղին բարելաւութեան համար սկսուած գործերն։

Ապա, յիշեալ Աղքատախնամ ընկերութեան արդէն խոստացած իւր նպաստի բաժինը նուիրելէ զատ՝ Սահակեան Սանուց ընկերութեան նախաձեռնութեամբ ի նպաստ երկսեռ վարժարանաց բացուած հանգանակութիւնն եւս իւր պաշտպանութեան ներքեւ առնուլ հաճելով՝ կարեւոր նպաստ մ'ալ բրաւ։

ՀԱՆԴԷՍ ՀԱՐՍԱՆԵԱՑ

Երէկ գիշեր ի Պէշիքթաշ Տատեանց ապարանքին մէջ տեղի ունեցաւ Սէլանիկի արքունի կալուածոց վերատեսուչ Գրիգոր էֆէնտի Բաշալեանի պսակադրութեան հանդէսն ընդ Օրիորդ Խոսրովուհի Տատեանի, դուստր հանգուցեալ Ներսէս պէյի Տատեան, կնքահայրութեամբ Վսեմ. Յարութիւն փաշայի Տատեան. Հանդիսին կը նախագահէր Պէշիքթաշի քարոզիչ Գեր. Խորէն Արքեպիսկոպոս, և պսակադրութեան խորհուրդը կատարեց Արժ. Տ. Յովհաննէս Ա. քահանայ Միրեան. Տիկին Ներսէս պէյ Տատեանի անձնական ծանր տկարութեան պատճառաւ երկու կողմանէ ազգականք ու բարեկամք հրաւիրեալ չէին, որով հարսանեաց հանդէսը բոլորովին ընտանեկան հանգամանք մ'ունէր. Ներկայ էին միայն Վսեմ. Յարութիւն փաշա Տատեան և Տիկին Տիրուհի Յարութիւն փաշա, Դատական գործոց Նախարարութեան խորհրդական Վսեմ. Վահան էֆէնտի Տիկինն և Օրիորդ Վահան էֆէնտի, Վսեմ. Տիրան պէյ Տատեան և Տիկին Տիրան պէյ, Տր. Նազաչեան էֆէնտի և Տիկին Եւգինէ Նազաչեան, Վսեմ. Սէչէնեի փաշա, Վսեմ. Տր. Տիգրան փաշա Փէշտիմալճեան, Ազն. հարսին եղբայրներն, Գրիգոր էֆէնտի Բաշալեանի եղբօրորդին Լեւոն էֆէնտի Բաշալեան, ևն.

Սեղանին վրայ, առաջին բաժակը պարպուեցաւ վասն բարօրութեան և արեւշատութեան Օգոստափառ Ինքնակալին.

Պսակի օրհնութեան աղօթքը կարդաց Գեր. Խորէն Արքեպիսկոպոս, որ այս առթիւ սրտաբուխ բարեմաղթութիւններ ըրաւ վասն յարատեւ երջանկութեան նորապսակ ամուսնացելոց.

Սեբաստացի երիտասարդ բժիշկ մը, Տր. Տիգրան Հ. Սիւնի, որ արդէն վկայական առած էր Նիւ-Եօրքի բժշկական Համալսարանէն, վերջերս Կայսերական վարժարանին մէջ ալ փայլուն քննութիւն մը տալով յաջողած է կանոնաւոր վկայագիր ստանալ. Պրուքլինի աչքի և ականջի հիւանդանոցին ներքին բժշկի պաշտօնը մրցման դրուած լինելով, Տր. Սիւնի յաջողած էր յաղթել բոլոր մրցակցաց և ստանձնել այս պաշտօնը, զոր վարեց երեք տարւոյ չափ, աչքի և ականջի հիւանդութեանց մասնագէտի համբաւ ստանալով իրաւամբ. Երիտասարդ բժիշկն, որ մտադիր է մայրաքաղաքիս մէջ հաստատուիլ, անդամ է նաեւ Պրուքլինի Ախտաբանական Ընկերութեան, և Միացեալ-Նահանգաց մէջ պատիւ բերած է հայ գիտութեան։

Հինգշաբթի օրը Ազգ. Պատրիարքարանի մէջ կատարուեցաւ Մայր վարժարանի ուսուցիչներէն Ֆրանկիւլ էֆ. Պաքըրճեանի նշանախօսութիւնն ընդ Օր. Ակիւլինէ Գազանճեանի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏԻՃԱՆՔ

Սալիսէի աստիճան տրուեցաւ Պէյքազարի նորընտիր գայմագամ Հաճի Մուսթաֆա Թեվֆիք էֆէնտիի։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ

Վեհ. Սուլթանը տեղեկանալով որ Յունաց Պատրիարքարանը դրամական անձկութեան մէջ կը գտնուի, 1,000 ոսկի շնորհած է յիշեալ Պատրիարքարանին։

ՕՏԱՐ ՊԱՇՏՕՆԵԱՅ

Աւստրիական կառավարութիւնն [illegible] Թօփի պատուանշանին երրորդ աստիճանը նուիրած է Թէրհալայի օսմանեան ընդհ. հիւպատոս Վէյէտաին Շէմսի պէյի. Կայս. Իրատէ մը արտօնած է այդ պատուանշանի գործածութիւնը։

ԲԱԹԱՆԹԻ ՏՈՒՐՔ

Ելմտական Նախարարութեան յանձնարարութեամբ՝ Քաղաքապետութեան և Թաղապետութեան բոլոր պաշտօնատանց մէջ գտնուած արհեստաւորներու և այլոց տետրակները նոյն Նախարարութեան ղրկուած են յառաջիկայ մարտին գանձելի Բաթանթի տրոց հիմ բանելու համար։

Գաւառաց եւս յանձնարարուած է յատուկ հրահանգին համաձայն բոլոր արհեստաւորաց և այլոց արձանագրութիւններ կատարել։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Նախարարաց Խորհուրդն իւր երեկի սովորական Նստին մէջ զբաղեցաւ ներքին և ելմտական կարեւոր խնդիրներով. Նիստէն յետոյ Պետական Խորհրդոյ նախագահ Բարձր. Արիֆի փաշա, Արտաքին գործոց Նախարար Վսեմ. Սայիտ փաշա և Ելմտական Նախարար Վսեմ. Յակոբ փաշա Բարձր. Մեծ-Եպարքոսին քով մնացին և պահ մը եւս խորհրդակցեցան ինչ ինչ կարեւոր խնդրոց վրայ.

Բարձր. Շէյխ Իւլ Իսլամ էֆէնտին տակաւին ապաքինած չլինելով ներկայ չգտնուեցաւ Նախարարաց Խորհրդոյ Նստին.

—Ներքին գործոց Վսեմ. Նախարարին Նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովը շաբաթ օրն ի Նիստ գումարեցաւ և զբաղեցաւ ելմտական խնդիրներով.

Ելմտական Նախարար Վսեմ. Յակոբ փաշա չկրցաւ ներկայ գտնուիլ սոյն յանձնաժողովոյ Նստին.

—Ֆրանսական դեսպանատան գործակատար Պ. Էմպէռ և անգլիական, ռուսական, աւստրիական, իտալական ու հելլենական դեսպանատանց առաջին թարգմանք շաբաթ օրը Բ. Դուռը գնացին և յաջորդաբար տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. Խորհրդականին հետ.

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Ծանուցուեցաւ թէ Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ ութ օր պայմանաժամ տրուած է Պ. Սիֆէյտէրի՝ Հայտար Փաշա Նիկոմիդիոյ երկաթուղեաց գիծը կայս. կառավարութեան յանձնելու համար և թէ Վեհ. Սուլթանն Իւր Իրատէով վաւերացուցած էր Նախարարաց Խորհրդոյ այդ որոշումն.

Արդ, Բարձր. Մեծ Եպարքոսը պաշտօնապէս հրամայած է Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան որպէս զի նոյն պայմանաժամէն յետոյ յանձնման և ստացման գործողութիւնը կատարուի. Հաւաստի կ'իմանայ թէ, հակառակ պարագային մէջ նոյն Նախարարութեան և ոստիկանութեան կողմէ կարգեալ յատուկ պաշտօնեայք հարկ եղածն ի գործ պիտի դնեն.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Գերմանական Նաւատորմին մարտանաւուց մին վերջերս Սամոս երթալով երկու օր մնացեր է Վաթիի Նաւահանգստին մէջ. Մարտանաւուն հրամանատարն և սպայք ցամաք ելնելով այցելութիւն տուեր են կղզւոյն կառավարիչ Քարաթէօտորի փաշայի որ յաջորդ օրն անոնց փոխադարձ այցելութեան գնացեր է. Այդ այցելութեան միջոցին գերմանական մարտանաւէն օսմանեան և սամոսեան դրօշակ պարզեր է և նուագախումբն Համիտիէ քայլերգն հնչեցուցեր է. Մարտանաւը մեկնած միջոցին Թնդանօթի տասնեւինն հարուած արձակեր է.

ԴԵՐ-ԾՈՎԱԿԱԼ ՀՕԼՄԱՆ

Միջերկրականի գերմանական նաւատորմին հրամանատար դեր-ծովակալ Հօլման մայրաքաղաքս գտնուած միջոցին Սեպահ և Ժօայիէ տեարց լուսանկարչատունն երթալով ի Բերա, իւր մեծադիր լուսանկարն հանել տուած է, աջ կողմն ունենալով Վսեմ. Ահմէտ փաշան ու ձախ կողմը՝ ծովային սպայ Օսման պէյը. Ծովակալին ետին կանգնած են իւր նաւատորմին գլխաւոր սպայք՝ իրենց ծովային համազգեստիւք, գերմանական հիւպատոսարանի պաշտօնեաներէն Պ. Ֆօն Քէօնլէր եւ օսմանեան սպայ մը.

Լուսանկարն հանուած է երկու տարբեր դիրքերով, որոց առաջնոյն մէջ ծովակալն, Ահմէտ փաշա և Օսման պէյ յոտին կանգնած են և երկրորդին մէջ՝ նստած. Սեպահ և Ժօայիէ տեարք մեծ խնամով պատրաստած են սոյն պատկերները զորս Զմիւռնիա պիտի ղրկեն, ծովակալին հասցէին.

ՍԱԼԱՅԱՏԱԿԱՑ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Վրան անուն եւրոպացի մը արտօնութիւն խնդրած է կայս. կառավարութենէն մեծ գործարան մը հաստատել ի Կ. Պոլիս, Եւրոպիոյ մէջ գործածուածներուն նման սալայատակի յատուկ քարերու պատրաստութեան համար. Այս գործարանն ո՛չ միայն լաւ և աժան քարեր պիտի պատրաստէ, այլ նաև գործ պիտի տայ բազմաթիւ մարդկան.

ԴԱՏԱՐԱՆԱՑ ԲԱՐԱՊԱՆՔ

Ատլիէի պաշտօնատան մէջ կազմեալ յանձնաժողով մը կը խորհրդակցի, դատի տերերու դիւրութիւն մը ընծայելու ու ծախքերը թեթեւցնելու համար, չափաւորել և կանոնաւոր վիճակի մը մէջ դնել դատարանաց բարապաններու յատուկ վարձքը և ցուցակ մը պատրաստելով աւելցնել դատական ծախուց յատուկ օրինաց վրայ.

ԳՈԼՏԵՐԻ ԱԳԱՐԱԿԸ

Այն ծրագրոյն վրայ, զոր Վէճաւբէկ ատենի անդամ Էմրուլլահ էֆէնտի տուած էր իբրև արդիւնք Գոլտէրէ ագարակի ծանուցեալ խնդրոյն առթիւ իւր կատարած քննութեանց, այդ խնդրոյն մէկ մասը յանձնուած է Վէճաւբէկ ատենի պատժական ճիւղին և միւս մասն ալ նոյն դատարանի Հուգուգի ճիւղին.

ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹԵՐ

Թուրք ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ 4 5 տարի առաջ կայս. կառավարութեան մատուցեալ ծրագրոյ մը վրայ որով առաջարկուած էր սիկառի թուղթերուն իւրաքանչիւր քաքէթէն հինգ փարայի տուրք մը առնուլ, որով առանց ոչ ոք վնասուելու կայս. կառավարութիւնը տարեկան 300,000 ոսկւոյ մօտ հասոյթ մը կ'ունենայ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Առեւտր. Լրագրէն քաղուած)

Շաբաթն որ անցաւ նշանակելի է արմտեաց ժամանմանց անբաւականութեամբ, ներմուծելի ապրանաց վրայ կատարուած գործողութեանց համեմատաբար բանուկ վիճակովն, և մեր արտածմանց հրապարակին վրայ տիրած անգործութեամբն՝ ի մասին տեղական արտադրութեանց, որպէս են մեթաքս, ափիոն, և այլն. Շաբթուս մէջ հասած ցորենի վաճառմանց գումարը կը հասնի 10,000 գրիւի և տարբերութիւնը՝ 20,000 գ. իւ, 50 000էն, 30,000ի իջեցուց պատրաստի քանակութիւնը. Ի Մարսիլիա՝ Պուրկազի ցորենի 100 քիլօ. 17 ֆրանք է, մինչդեռ ի մեզ 18 էն 19 ղրուշ կ'լնէ. Եգիպտացորենի վաճառմունք կը հասնին 500 պարկի. Գարով գարիին, վաճառում տեղի ունեցած չլինելով բնաւ, չարշուս մէջ հասած 20,000 գրիւն աւելցաւ պատրաստ գտնուածին վրայ որուն քանակութիւնն հասցուց 32,000 գրիւի. Ալիւրի վաճառմունք հասան 1500 պարկի և ժամանմունք 2000 պարկի, և տարբերութիւնն աւելցաւ պատրաստին վրայ որ 8500 պարկ է այժմ. Լուբիա չհասաւ բնաւ և չաբաթական վաճառմանց գումարն է 500 պարկ որ պատրաստէն տրուեցաւ որուն քանակութիւնը 3500 պարկի իջեցուց այսպէս Չարշուս մէջ մի քանի ղրուշի բարձրացում մը տեղի ունեցաւ այդ քերոց գնոյն վրայ. 300 պարկ սիսեռ, որք հասած էին չարշուան մէջ, ամբողջովին վաճառուեցան և պատրաստի քանակութիւնը կը ներկայացնէն միշտ 3500 պարկ.

Վաճառեցաւ 600 պարկ սուսամ. Վուշի հունտի վաճառմունք որք 150 պարկի հասան, հաւասարակշռեցին հասածներուն քանակութիւնը, որով պատրաստը միշտ նոյն կը մնայ. Ի լիտոյի հունտք հետզհետէ կը փնտռուին եւ գները նպաստաւոր ազդեցութեան մը ներքեւ են Կարէկի վերայ գործ չեղաւ բնաւ չարշուս մէջ. Գները կը տարբերին 48 էն 49 ի միջեւ. Ի Ռոտոսդոյ, սովորական տեսակներու գները 41 էն 42 փարայ են եւ գործողութիւնք բաւական բանուկ են անդ. 50 պարկ կալին վաճառեցաւ, 92 ղրուշէն.

Գալով մեր արտածելի գլխաւոր նիւթոց, կաւերտի վրայ բնաւ գործ չեղաւ. Նոյն անգործութիւնը կը տիրէ նաեւ թիֆթիկին վրայ ուսոյ ո՛չ մէկ հակ վաճառեցաւ. Հազիւ տասն չափ սնտուկ ափիոն, երկրորդական տեսակէ Գարահիսարի, Պալըքէսիրի և Էսկի Շէհիրի, վաճառեցան 125 ղրուշի. 12 սնտուկ առաջին տեսակէ վաճառեցան օխան 113 ղրուշէն.

◆

Երէկ մայրաքաղաքս ժամանեցին Հիճազի նահանգին Իտարէի ժողովոյ առաջին քարտուղար Մուսթաֆա Րէշիտ էֆէնտի՝ Աղեքսանդրիայէն, Զմիւռնիա գայմագամ Եուսուֆ Պաշըր պէյ՝ Սամսոնէն, և 51 նոր զինուորք Տրապիզոնէն ու Սեւ ծովու ափնեայ այլ նաւահանգիստներէ.

—Ծովային Ֆէրիգ Հիւսէյին փաշա որ Կրետէ կը գտնուի և որոյ հիւանդ լինելը ծանուցուեցաւ, բաւական ապաքինած է. սակայն զինքը դարմանող բժիշկները տեղեկագիր մը տալով յայտնած են թէ Հիւսէյին փաշա կատարելապէս առողջանալու համար պարտի ամառուան եղանակին մէջ օդափոխութեան երթալ յԵւրոպա.

—Մէքթուպճին, ծանուցանելէ յետոյ թէ Պոլսոյ մըգեղինաց մաքսատան հասոյթք օր աւուր կ'աւելնան, գովեստիւք կը խօսի նոյն մաքսատան Տնօրէն Աստուր էֆէնտիի պաշտօնավարութեան վրայ և կը յարէ թէ հասոյթի այս յաւելում արդիւնք է Աստուր էֆէնտիի ուղղամտութեան և բարւոք պաշտօնավարութեան.

—Սեբաստիոյ տասանորդական տուրքն որ ցարդ 100,000 ոսկի կը բռնէր, այս անգամ ջանիւք տեղւոյն կուսակալ Սուրուրի փաշայի 200,000 ոսկւոյ վարձակալութեան տրուած է.

—Եւրոպիոյ դատական պաշտօնէութիւնն որ ցարդ գաւառակի դատական պաշտօնէութեան ձեւ ունէր, գաւառի պաշտօնէութեան ձեւ պիտի առնու. Այս առթիւ նոր պաշտօնեայք պիտի կարգուին և դատարանք ըստ այնմ պիտի կազմակերպուին.

—Սպարապետի Դիւան առողջապահական ճիւղին նախագահ Ֆէրիգ Նուրի փաշա ծանրապէս հիւանդ է.

—Ռումանական դեսպան Պ. Պալաչեանօ շաբաթ օրը Ռումանիա ուղեւորեցաւ Վառնայի շոգենաւով.

—Այս գիշեր կայս. պալատան մէջ շքեղ հացկերոյթ մը պիտի տրուի ի պատիւ աւստրիական դեսպան Պ. Քալիչէի.

—Տասն երկու օր առաջ Տրապիզոնի քաղաքն եւ շրջակայքը ձիւն տեղացեր եւ այժմ գետինները 3-6 թիզ ձիւնով ծածկուած են եղեր։

—303 նոր զինուորք ղրկուեցան յԱփրիկեան Տրիպոլիս, 170՝ ի Հանիա, 315՝ ի Տարտանէլ եւ 114՝ ի Տրապիզոն։

—Եղեռնադատ ատեանը չորս տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտեց Մուսթաֆա անուն ձիավար մը որ ի Սկիւտար ծանրապէս վիրաւորած էր Սարգ եւ Մէհմէտ անուն երկու գաղթականներ. Մուսթաֆա նոյնպէս դատապարտուեցաւ վիրաբուժական ծախուց վճարման.

—Վերաքննիչ ատենի ընդհանուր դատախազ Խալիլ պէյ շաբաթ օրը կեդրոնական բանտն այցելեց և քննեց բոլոր բանտարկելոց վիճակը.

—Ոստիկանութիւնն երէկ տասն-հինգ չարագործներ աքսորեց հեռաւոր վայրեր.

—Անցեալ հինգշաբթի գիշեր ի Մայթէփէ եկան սայլերով հարս կը բերէին նոյն գիւղն և ըստ սովորութեան հրացաններ կարձակէին. սակայն դժբաղդաբար արձակեալ հրացաններու գնդակներէն մին Րէճէպ անուն անցորդի մը հանդիպելով բաւական վիրաւորեց զնա.

Ոստիկանութիւնն, այս առթիւ, այս աւուր թերթք լրագրաց միջոցաւ կ'ազդարարէ զգուշանալ այդ կարգի հին եւ մանաւանդ վնասակար սովորութիւններէ.

—Պետական Խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է կայս. Իրատէով, Սինոպի Պոյապատ գաւառակին Իլեաս գիւղն միացած է Թաշքէօփրի գաւառակին, ուրկից կէս ժամու հեռաւորութիւն մը ունի. Նոյնպէս Այս վերջին գաւառակին Եւրիք գիւղն եւս միացած է Պոյապատ գաւառակին, ուրկից կէս ժամու հեռաւորութիւն մը ունի.

—Փիլիպէի իտալական փոխ-հիւպատոս անուանուած է Պ. Սթէֆանին և Բ. Դուռը վաւերացուցած է նորա պաշտօնը.

—Տրապիզոնի մէջ իտալական վարժարան մը պիտի հաստատուի նման այն վարժարանաց զորս իտալական կառավարութիւնն հիմնելու վրայ է յայլեւայլս.

—Իտալական եռակայմ առագաստանաւ մը որ Պէօյիւք-Ատայի առջեւ կը գտնուէր (Սեւ ծովու մէջ) քանի մ'օր առաջ ընկղմեր է. Նաւապետն ու նաւաստիք, որք ազատած են, կը պատմեն թէ Պաթում կ'ուղեւորէին, քարիւղ բեռցնելու համար, երբ առագաստանաւն ճեղքուածք մ'ունենալով, Պէօյիւք-Ատայի նաւահանգիստն ապաստաներ է. սակայն ամեն ջանք անօգուտ եղեր են զայն ազատելու համար.

—Կէլիպօլուէն կը գրեն թէ ամսոյս 13/25ին [illegible] անուն անգլիական շոգենաւ մը, ցորեն բեռցած, Տօղան Ասլան կոչուած տեղը խրեր է. Կէլիպօլուի անգլ. դեր-հիւպատոս Պ. Ամիլքար Օտոնի արկածի վայրը փութացեր է օգնութիւն հասցնելու համար.

—Սեբաստիոյ լրագրոյն մէջ կը կարդանք թէ ձերբակալուեր են այն աւազակներն որք կողոպտած էին Տիվրիկի շրջակայ Քէսմէ գիւղացի Կարապետ անուն անձն երբ սա Կ. Պոլսէն վերադառնալով իւր գիւղը կերթար. Կողոպտած ապրանքներն՝ 300 ոսկի, երեք ոսկի ժամացոյց, ոսկի ապարանջան և այլ այդ կարգի արժէքաւոր նիւթեր, ամբողջովին գտնուելով կառավարութեան յանձնուած են.

ԲԺՇԿԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՇՆՉԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

Տարւոյս այս եղանակին յորում ամենէն աւելի տարածուած հիւանդութիւնք յառաջ կու գան շնչառական գործարաններէն, օգտակար թուեցաւ մեզ ցուցակ մը պատրաստել այս զանազան հիւանդութեանց՝ «յուսումն և ի խրատ» մեր ընթերցողաց.

Շնչառական գործարանաց հիւանդութիւններն եւ քթի խողովակի հիւանդութիւնք, սուր և պարբերական հարբուխ, [illegible]. Ամեն ոք գիտէ ատոնց արդիւնքը.

Ապա կու գան շնչափողի հիւանդութիւնք. սուր խռչակատապ, կոկորդի ցաւ, գաղղիախտային եւ թոքախտային խռչակատապ, ձայնի անդամալուծում աքլորախեղդ եւ [illegible].

Այս զանազան հիւանդութեանց երեւոյթներն են հեւձում և ձայնի չքում, կոկորդի խռխռում, ճնշում, մարած ձայն, չոր հազ որք գիշերն աւելի յաճախակի է, մաղասի արտաթորում, յոգնածութիւն և ընդհանուր տկարութիւն.

Ասոնցմէ զատ կան պրոնշիդները, յետոյ արշաւասոյր թոքախտը եւ շնչհեղձութիւնը. Այս ախտանիշերն աւելի ծանր են և ի յայտ կուգան չոր և տաժանելի հազերով, ծանր տենդով, խանձլններով, մաղասի երկարատեւ արտաթորմամբ.

Ապա կու գան լեարդի ամեն տեսակ հիւանդութիւնք որք կողի ցաւերով, գիշերային քրտինքներով, եւ ուրիշ ծանր նշաններով կը յայտնուին.

Այն անձինք որք այս ախտանիշերէն մին կ'զգան, անմիջապէս ծծելու են Ժէրոտէլի Բասդիլներն. բասդիլը քիչ մը բերնին մէջ հալեցնելէ յետոյ, մեղմիւ ծծելու է. Այս կերպով սոյն բասդիլներէն ելնող գոլորշիները ուղղակի կ'երթան խոչակներուն փոխանակ ստամոքսին երթալու, ինչպէս պինդ կամ հեղուկ դեղերն զորս հարկ է կլնել. Եթէ Ժէրոտէլի Բասդիլները բուժիչ են, եւս առաւել կանխարգել են, եւ այս ցուրտ օդերուն ամենէն տարրական զգուշութիւնը կը պահանջէ հատ մը ծծած դուրս ելնել կամ օդ փոխել. Այդ եղանակաւ, ցուրտ օդը կը վտարուի խայծղանի գոլորշիներէն որք կան թոքերուն մէջ և այս կերպով ազատուած են.

ՏՐ. ՊՈՒԱՅՈՆԷ
[illegible]

H

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Ակռայի ցաւի իբր դարման առ, կրամ

Քլօռաֆօրմ (Chloroforme)	7
Ձիթ	4

Հալեցնել ձիթը քլօռաֆօրմին մէջ և յետոյ աւելցնել.

Բերուի անանուխ (Baume de Pérou) 2 կրամ. Ձգել խառնուրդն 12-15 ժամ, ապա մզել.

Գործածութեան համար, լից 2-3 կաթիլ բամբակի կտորի մը վրայ և յետոյ ցաւած ակռային խոռոչին մէջ դիր.

ՔԻՄԻԱՍԷՐՆ

ԱԶԴ

Նախորդ վկայեալ ուսումնաւարտ Հայկ. Կրթարանի և Համիտիէ Առեւտրական բարձրագոյն վարժարանի՝ պատրաստ տուներու մէջ և մասնաւորաց դաս տալ հայ, թուրք. և ֆրանսերէն լեզուաց. փափաքողաց՝ գիտութեանց, ուսողութեանց և Առեւտրական գիտելեաց դասախօսութիւնք եւս կրնան տրուիլ. դիմել [illegible] խմբագրատունը. 1283 3—3

ԱԶԴ. — Ազգասէր Հայուհեաց ընկերութեան գաւառային վարժարանաց համար կը խնդրուի երկու վարժուհի, վկայեալ յ[illegible]. Խորհրդոյ, եւ հմուտ ասեղնագործութեան. Փափաքողք կրնան դիմել առ Ատենապետուհին յիշեալ ընկերութեան Տնօրէն Խորհրդոյ, Ազն. Տիկ. Տիրուհի Մ. Մանիկոնեան, Բերա, Սագզը Աղաճ, Առապաճը փողոց, Թիւ 21.
2284 2—3

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Վիեննա, 30 դեկտ.

Սոֆիայէ կը ծանուցուի թէ Ֆերտինանտ Իշխան, խմբագրի մը հետ խօսակցելով, խստիւ բողոքած է ընդդէմ այն գաղափարին թէ Պուլկարիա արկածախնդիր ընթացքի մը հետամուտ է.

Հռոմ, 30 դեկտ.

Պ. Կրիմալտի ելեւմտից Նախարար անուանեցաւ, Պ. Մայլիանիի տեղ, որ հրաժարականն ընդունուեցաւ.

Պ. Փերաձի, արքայական գանձուն նախարար, և Պ. Միչէլի հողագործութեան ու վաճառականութեան նախարար անուանեցան.

Փարիզ, 30 դեկտ.

Խորհրդարանական նստաշրջանը փակեցաւ.

ԴՐԱՄԱԿԱՆ

Ղալաթիա, 19 դեկտեմբեր
[illegible]

ԸՆԹԱՑԻՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110 1/4
3 » » » (վճռականին)	109 7/8
3 » Փարիզի » (պանքայի)	22 95
3 » » » (վճռականին)	23 02 1/2

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Օ. Սերի)		16 19
Պօրսային գոցուելէն վերջը	»	16 19
Առաւօտուն բացուեցաւ	» Գ. Կ.	16 19 1/2
Կէս օրին	» »	16 20 1/2

[illegible]

Երէկ երեկոյ		38 28
Այս առաւօտ	Գ. Կ.	38 32
Կէս օր	»	38 31

ԸՆԹԱՑԻՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառութիւն	A	Սերի	Գ. Կ.	26 30
»	B	»	»	15 36
»	C	»	»	16 19

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.		4 24
Քրետի Ժէնէրալ	Օսմ.	»	8 30
Պանք տը Գօնս.	»	»	7 7
Ծօս. Շանժ է վալէօր	»	»	4 33
Թրամուէյ	»	»	455
Բումելի երկաթուղի	Ֆր.		46 5/8
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»		125

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 32
Անգլիական ոսկի	»	110 28
Իմբերիալ	»	91 30
Քրիմից	»	51 10
Բուպլի Թղթադրամ	»	8 80
» արծաթ	»	77
Մեճ. արծ. (տարբ.)	»	109
Վեցնոց	»	103
Հինգնոց	»	103
Պէշլիք	»	102
Թաւփիքէ	»	10 20

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՕՐՍԱ

Լոնտոն, 22 Դեկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ				97 1/2
Օսմ.	»	Սերի Դ.	բացուեցաւ	14 7/8
»	»	»	գոցուեցաւ	14 15/16
»	»	»	Ա.	26 1/2
»	»	»	Բ.	15 5/8
»	»	»	Գ.	14 3/4
Օթօման 1871				83 1/4
Փոխառութիւն 1877				95
Պանք Օթօման				11
Ռուսական փոխառ. 1873				99 1/2
Եգիպտական միացեալ (ունիֆիէ)				82 3/4
» առանձն. (բրիվիլէժիէ)				101 1/2
Տայրա Սանիէ				78 3/4
Յօնանիայ (փոխառ. Ռօշիլտ)				100 1/4
Կառավարական պարտաթուղթ 4 %				— —
Փոխանակութիւն Փարիզի վրայ				25 686

Վիեննա, 29 Դեկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 20
Օսմանեան երկաթուղի	22 [illegible]

Փարիզ, 29 Դեկտեմբեր ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %				104 37 1/2
»	» 3 %			82 67 1/2
Օսմանեան քօնսօլիտէ	Սերի Դ.		բացուեցաւ	15 07 1/2
»	»	»	գոցուեցաւ	15 07 1/2
»	»	»	Բ.	14 90
»	»	»	Գ.	14 90
Օսմանեան երկաթուղի				46
»	[illegible] բաժնեթղթք			— —
Պանք Օթօման				529 37 1/2
Քրէտի Լիոնէ				618 75
» Ֆօնսիէ				1366 25
[illegible] Լիոնէ				1282 50
Սուէզի ջրանցք				2193 75
Ռուսական 5 % 1877 ի				104

Իտալական Ռանթ	96 40
Օսմանեան (արտաքին)	73 1/4
Եգիպտական միացեալ փ. բ.	419 37 1/2
Բրիօրիթէ Թիւրք	418 75
Հելլենական 5 %	437 50
Ձէք Լոնտրայի վրայ	25 33

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 29 Դեկտ. ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 1/2 %	82 65
Օսմանեան քօնսօլիտէ	— —
Եգիպտական	418 75

ՎԱՌԱՐԱՆԻՍ ՔՈՎ

Մանավեանի հանգիստը.—Բալուոյ մէջ.—Իր ուսուցչութիւնը.—Գրական գործերը.—Տնական կեանքն և բարեսիրտ երկաթագործը.—Հայ լեզուի ուսուցչութիւն.—Ռումանիոյ խնդիր և աղաչանք.

Նախորդ շաբթու ուրբաթ օր Խասգիւղի սուրբ բլուրը տարուեցաւ ուսուցիչ մը, Տիգրան Մանավեան. Իր յուղարկաւորք էին իր պաշտօնակից եղբարք, մտերիմք, Ս. Ստեփաննոսի քարոզիչ վարդապետն և Եպիսկոպոս մը որ հանգուցելոյն երկար կենակից եղած է.

Մանավեան, իբրև համեստ ուսուցիչ հայերէն լեզուի, սակաւուց խօսիցը միայն նիւթ եղաւ.—«ազատեցաւ», ահա վերջին բառը՝ զոր իր մտերիմք՝ իբրեւ արձանական յիշատակի, ձգեցին իր ցուրտ հողադնտին վրայ և դարձան արցունքոտ աչօք. Ինչը զո՞հ է արդեօք իրեն ընծայուած այդ մտերմական մեծարանքէն, չգիտեմ զայս միայն սա յայտնի է որ ալ չ'պիտի կրկնէ իր հանապազօրեայ օրհներգը «դժբախտ Մանավեան» և բլրին տակ խռովայոյզ ուսուցիչը ա՛լ հանգիստ է բլրին վրայ. Հոն ոչ Թաղականի զօրութիւն կայ, ոչ բարձրագոյն ազդեցութիւն և ոչ իսկ անիրաւ և անխիղճ գանձապետ. Հանգիստ, այս բառն աւելի պատշաճաւոր է Մանավեանի յիշատակին, որ ծիր մարտկի մը պէս կը գլորի խոնջ և լքեալ պատերազմէն.

* *

Ուսուցիչ մը՝ որ խղճի մտօք գրկած է ազգ. դաստիարակութիւնը և բաւական լոյս ունի իր խնամոց յանձնուած մանկտւոյն ընծայելու, ո՛րչափ ալ անշուք և անշշուկ ի գերեզման տարուի, իր ետեւը կը թողու ազգ. կեանք մը. Ըստ այսմ Մանավեան, ուսուցիչ ազգ. լեզուի, 25 տարւոյ կեանք կը թողու մեր վարժարանաց մէջ.

25 տարի, ո՛րչափ դիւրաւ կ'արտասանենք. այլ ուսուցիչ մը քանի՞ն դժուարութեամբ կը բարդէ զայնս իրարու վրայ. ո՛րչափ բան, կար ու կարողութիւն սպառած է մինչեւ այն ատեն երբ կարող կըլլայ ըսել թէ ահա 25 տարի ազգ. վարժարանաց մէջ կը նետեմ, և ադոնք են իր ազգ. կեանքը.

Մանավեանի ազգ. կեանքը Բալուէն կ'սկսի. 1861 թուականին հրաշագործ Մկրտիչ Եպիսկոպոս զնա իր հետ այդ գաւառը տարած է. իր մեկնելէն ետքն ալ Տիգրան հոն մնացած է. Ընդ աղօտ իմն կը յիշեմ որ զնա տեսած ըլլամ. սեւ մօրուօք, սպիտակ և նուրբ երիտասարդ մըն էր. Այն ատեն կըսէին թէ շատ բան գիտէ. մանաւանդ քաջ է եղած. Հրացանն իր սովորական խաղալիքն ըրած է. Մանավեանի անունը, իր մեկնելէն ետքն ալ, մեր վանուց մէջ մնացած էր. ճանչցողներն ալ ասեպ լսած էին իր անունը. 84 թուականին, մեր Անդրէաս վարդապետ կիւրակէ առաւօտ մը կանուխ կամրջին վրայ կը քալէր.—Ու՞ր կ'երթաս, հարցուցի.—Խասգիւղ, ըսաւ, տեսնելու համար իմ մտերիմներէն մին. Հետաքրքրութիւնս գոհացնելու համար. փափաքեցայ գիտել մեր խեղճուկ վարժապետին բարեկամը, զոր ունէր Խասգիւղի մէջ. և էր նա ինքն Տիգրան Մանավեան, և այն օրէն ալ իմացայ որ Մանավեան մեր վանքի քաջ Տիգրանն էր, և այնուհետեւ սկսած էի կրկնակի սիրով սիրել զնա, զի մեր երկրի, մեր վանքի հոտն ունէր ինձ համար, և յարգանք կը տածէի առ նա իբրեւ կէս հայրենակիցս. Թէ արդեօք ի՛նչ արդիւնք ունեցաւ Տիգրան Բալուայ մէջ, եւ ի՛նչ թողուց այդ գաւառին մէջ, չեմ գիտեր.

Բալուէն մեկնելէն ետքը, կարծեմ, կ'սկսի իր ուսուցչութեան կարեւոր թուականն, այսինքն այն պատերազմ՝ զոր մղեց մինչեւ իր մահուան նախընթաց օրը. պատերազմ՝ խաւարին դէմ, պատերազմ յուսահատութեան դէմ, պատերազմ մեր ոնամէջ հոգաբարձուաց և Թաղական աղաներու դէմ. Ինչպէս որ երբ մարդ տեսնէ սպիներով զարդարուած կուրծք մը և նժդեհ ճակատ մը կքնած իր զինուց վրայ, չտարակուսիր ըսելու որ սա պատերազմի հրդեհներէն անցած է, նոյնպէս ալ Տիգրանը տեսնող ամէն ոք դիւրաւ կը համոզուէր որ քաջ կռուող մը եղած էր իր նուիրական զինուորութեան մէջ. վէրքեր ունէր Թաղականներու ձեռքէն, վէրքեր ունէր հոգաբարձուաց սուրերէն, վէրքեր ունէր բարձր խորհուրդներու զէնքերէն. Իր արտաքինն ալ բնաւ հրապոյր չունէր. անհոգ հագուած, անյարդար կը թողուր իր մազերը. Նիհար և ա՛նչափ փոխէր որ անշուշտ կռուելով այրելով ըսպառած էր. Այսու ամենայնիւ՝ բաւ և շատ իսկ էր քիչ մը խառնել զնա, և ահա կը տեսնէիր այդ մաշած տաշուած մարդուն քով դիւրագրգիռ ըղձացումներ՝ որք հրեղէն հոսանքի պէս՝ ի դուրս կը յորդէին. Աչքէ անցնելով մեր հին պատուելիներու կեանքը, լոռոց բազումք ծաւելով ծաւելով՝ մինչեւ անարգութեան ստորնագոյն աստիճանը տարին Ազգ. վարժապետութիւնը, և տեսնելով զՏիգրան՝ որ մինչեւ իր յետին և աւաղելի օրն ալ ոչ մեկուն առջեւ ծալեցաւ, մարդ յիրաւի իսկ կը զարմանար և մեծապէս գոհ կ'ըլլար, որ Մանավեան, կիսով չափ հին դպրոցի ուսուցիչ, նոր և երիտասարդ ուսուցչաց ոմանց չունեցածն ունէր, անվախ բնաւորութիւն, իրաւանց վըրէժխնդիր ոգի, քննադատելու, ծաղրելու և ձաղկելու եռանդն ու կարողութիւն.

Ձծուեցաւ, այո, և սակայն քանիցս չղթայուած՝ խուլ մանչիկներ նետած է իր թղթերուն վրայ, որք լոյս չտեսան, և քանիցս ունեցաւ հառաչանքներ իր կրծոց տակ խեղդուած. Նախորդ Ուսմ. խորհրդոյ ծրագրին դէմ, Ազգ. Թերթի մը մէջ, քննադատութիւններ գրեց. Ցոցուածը խմբագրուած էր թէեւ անխնամ ոճով, այլ ամեն էջ թաթխուած է դիւրագորով հօր մը և փորձ ուսուցչի մը շընչովն ու ոգւովը. «Եթէ բախտը կը զըլանայ աղքատաց իր ոսկին, գէթ զուգթա՛ և մի զրկեր զանոնք ուսման և գիտութեան քաղցրագոյն ճաշակէն և հաճոյքներէն, որք երկնաւաք զուարթուններ են՝ նոցա անողոք ճակատագիրն մասամբ իւիք ի հաշտութիւն ածելու». Զաւակաց հայր ուսուցիչը, արդարակ ցաւմանէ դրդեալ, կը խայթէ, սուր սլաքներ ալ կը թօթափէ. Տեղ մը մեր պաշտօնական ուսմանց յայտագիրը բքքբելով՝ Քուիլովի Սայլին յիշատակութիւնը կըսէ և կըսէ այսպէս. «Այս առակը շատ աղէկ կը յարմարի մեր դաստիարակութեան խնդրոյն, զոր տգիտութիւնը դէպ ի խաւար տանիլ կուզէ, շահամոլութիւնը դէպի իւր արկղն, անկեղծութիւնը՝ դէպի իւր նպատակը.» Տիգրան կը ճանչէր մեր մեծ մարդոց տկարութիւնը, արիութիւնը կըսեմ. գիտէր որ դժուարութեանց պիտի բաղխի, սպառնալիքներ պիտի լսէ. Եւ յիրաւի ալ, հազիւ թէ իր մէկ քննադատականը ի լոյս կելնէր, հետեւեալ օր կանուխ պաշտօնական թուղթ մը, թօնի մէջ թաթխուած, զրկուած էր բարձր տեղ մը արտաքսել զնա իր մէկ վարժարանէն, երկրորդ օրն ալ պաշտօնական ազդարարութիւն ընդունեցաւ որ եթէ այդու [illegible] պիտի արտաքսուէր ազգ. բոլոր վարժարաններէ. Տիգրան, իբրեւ կռուոյ մարդ, սպառնալիքէ վախցող չէր. բայց աւա՜ղ տես որ իր կենաց հետ մտերմապէս կապուած էին կին մը և վեց հատ արու զաւակներ. ուստի [illegible] Դամոկլեան սուրէն աւելի երկիւղալի էր իրեն բնականաբար, և ահա լռեց, ծրռեցաւ այն երկաթի մարդն իր մանուկներուն առջեւ, և այնուհետեւ մեր Հրապարակն եղած էր չդեկառբի ժողովրդական թիւն, ուր Տիգրան իր քննադատութեան մնացորդը կ'աւարտէր. Ա՜հ, հաց, կ'անիծէի զքեզ բոլոր ուժովս, եթէ ՔՐԻՍՏՈՍ ԻՐ ՄԱՐՄԻՆԸ քեզմով չընէր.

Մանավեան չափով մը գրական ալ մարդ էր. Գայլ Վահան անուն թատերգութիւն մը գրած է, թէեւ չտեսած եմ զայն. Վարդան մըն ալ ունի, զոր տեսած եմ ի Ռուսօթոյ. Որչափ կը յիշեմ, բաւական լաւ գործ մըն էր, Յովսէփ Կաթողիկոս և Ղեւոնդ աղէկ նկարագրուած էին. Յօդուածներ գըրած էր այլ և այլ ազգային խնդրոց համար. Իր վերջին գրածն եղաւ ոտանաւոր մը՝ որ գրուած է յառաջիկայ տարուան օրացոյցին սկիզբը, և յօդուած մը, դառնութեամբ լի գրութիւն մը, յաւիտենական բողոք, որ անտիպ մնացած է, և զոր, ափսոս, չկրցի ձեռք ձգել. Անշուշտ օր մը լոյս կը տեսնէ, և վա՜յ անոնց . . . . Շատ բան այսպէս է, ինչ որ կարելի չէ եղած հրատարակել ի կենդանութեան, մահը երեւան կը բերէ զայն. Արդ, ասոնք մեծ գրական կեանք մը են թագրէն կամ ոչ, սա յայտնի է որ Մանավեան իբրև հայ ուսուցիչ բաւական ապրեցաւ, իսկ իբրեւ մարդ՝ վաղամեռիկ գնաց. այլոց ուսուցանելու միշտ զբաղեալ՝ բնականաբար քիչ ժամանակ կ'ունենար իր զարգացման նուիրելու. Իր կեանքը պիտի ըլլայ և մերն ալ.

* *

Մանավեան իբրեւ ամուսնացեալ մարդ, պարկեշտ հայ և համեստ հայր մըն էր, ինքն յինքեան իր մանկիկներովն ու տնովը. ոչ մէկու մը կարօտ ըլլալ իր տանը, ցաւագին յիշատակներ չթողուլ իր զաւկներուն և կնոջն՝ որոց անձնուէր եղած է մինչեւ իր վերջին օրը. դուրսը՝ տրտմութիւնը և տանը մէջ խնդութիւն հագած է միշտ. տրտմութիւնն իր վերջին օրը միայն չէ կրցած ծածկել. Մտերմիս մէկը կը պատմէ որ երբ յանկարծ կոչուեցանք Մանավեանի տունը և գտանք զնա անկողնի մէջ՝ անակնկալ խիժով մը զարնուած կոչեց իր Արամն և ըսաւ, «Զաւակս, ուսումդ շարունակէ», և արցունքն իր աչքերուն մէջ շողաց. Կը խորհէր անշուշտ բարեմոյն հայրն որ ինչո՞ւ չէ կարող իր բարոյական կտակին հետ՝ նիւթական կտակներ ալ ընել իր որդւոց. Ինչո՞ւ 25 տարի Ազգին մանկտւոյն կեանք, կուրծք սպառելէն ու տաշելէն ետքը, կարող չըլլար իր յետին վայրկեաններուն մէջ՝ ոսկեայ ծրար մը յանձնել իր կնոջն և յանձնարարել որ իր որբերը խնամէ և չթողու որ այլոց ձեռքն նային կարօտագին նայուածքով. Դա՛ռն է այս, եղիա, դառն իբրեւ զօշինդր . . . 25 տարուան Ուսուցիչը իր մեռնելու վայրկենին ալ խաղաղութիւն չէ ունեցած, իսկ թէթեւ գոհութիւն մը՝ զոր ունեցած է, այս է որ պարտքեր չթողուց. զի երբեք ոսկի՝ զոր պարտ էր իր դրացի բարեսիրտ երկաթագործին՝ իր մահուան նախընթաց գիշերը հատուցած է.

Այս պարտքը բաւական մեծ ուէր ունի իր մէջ, և պէտք է զայն աւանդել իր կենսագրութեան մէջ իբրեւ յրացուցիչ և վախճան իր ուսուցչութեան և իր կենացը. Խասգիւղի թաղ. սընտուկէն բաւական պահանջք ունեցաւ վերջերս Մանավեան. Ցրտագին օր մը սնակ կը պահանջէ ի մէջ բերելով առտնին կարգ մը պէտքեր, մանաւանդ ածուխ. Սակայն, ինչպէս շատ անգամ, նոյն օրն ալ ոչինչ կ'ընդունի. Մէրկէլ աղա, բարեսիրտ երկաթագործը, ականջալուր, կը խնդրէ Մանավեանէն ի միասին վար իջնել. Ուղղակի ածխավաճառին կ'երթայ, և 600 քաշ կշռել տալով, որպէս թէ իրեն համար, Մանավեանի տունը կը ղրկէ, և կ'աղաչէ միանգամայն որ բնաւ փոյթ չընէ, երբ որ դիւրութիւն ունենայ՝ այն ատեն հատուցանէ. Այդ պարտքն էր զոր Մանավեան, քանի օր չանցած, հատուցած էր մէկ օր առաջ երեկոյին տակաւին ի տուն չմտած. Օրհնեալ ըլլայ երկաթագործն, որ մետաղէն կայծ և սրրտէն մարդասիրութեան զգացմունք թռչուցանել գիտէ. և այսպէս նշաւակ ըրած էր այն մեծ մարդիկն՝ որ Ազգին դրամն ազգ. լեզուի ուսուցչին տալու յօժարութիւնն ունեցած չէին.

* *

Հիմա ասոնք ամենքն ալ անցած են. Մանավեան կը թողու կին մը իւր տան մէջ և վեց հատ արու մանչեր, սիրուն անուններով սիրուն զաւկներ ազգին, Վահան, Վահրամ, Արամ, Տրդատ ևն. Մանավեան պարապ կը թողու հայ լեզուի ուսուցչաց մէջ իւր տեղն և այս տեսութեամբ ալ մեծ կորուստ մըն է Տիգրանի մահը.

Քանի մը տարիներ առաջ հայ լեզուի ուսուցիչներ ունէինք. այսօր այդ թիւը տակաւ անձկանալու վրայ է. և այս անշուշտ իր ներքին պատճառն ունեցած է. Մակաբերելը դժուարին չէ. Կտակներով, եկեղեցւոյն կանթեղներով տրուած դրամն այսօր յուսահատ կը սպառի տգիտութեան ձեռքով. Հայ լեզուի տրուած կարեւորութիւնը ջրնջուած պէտք է նկատել այն ամսական վճարմամբ՝ զոր ամեն թաղ կը նշանակէ իր ելեւմտացոյցին մէջ. Եւ այսպէս քանի մը տարի ալ հազիւ անցած, պիտի տեսնենք որ նոյն իսկ կեդրոնին մէջ՝ ուր ազգը դրամ կը վատնէ, ժողով կայ, Պատրիարք կայ, վարդապետ կայ, նուիրական շատ բաներ ոտնակօխ եղած են և ազգային որբութեանց դըրօշակը տիղմերու մէջ. Ինչո՞ւ Պատրիարքարանը Նախորդ ուրբաթ օր իր ներկայացուցիչը չունէր Տիգրանի գերեզմանին քով. Հայ լեզուի ուսուցչութիւնը միշտ նուիրականութիւն ունի. մեր ազգն և հոգեւորական կեանքին մէջ բան մըն է այն. և այս անկման ժամանակին մէջ՝ ով որ ոգւով ազգ. լեզուն կը գրկէ և անոր տարածմանը շունչ, կեանք և ոգի կը սպառէ, քահանայէ մը աւելի սրբութիւն ունի մեր պատմութեան առջեւ. Այսպէս, ո՛վ Մանավեան, դու ինձ համար սուրբ մըն էիր . . . .

* *

Հայ լեզուի համար վերջին հատուածը կը յիշեցնէ վերստին Ռումանիոյ հայերը. Ամուսնական խնդիր մը Ռումանիոյ Առաջնորդը գտաւ. և գոհ ենք որ խնդիրն ինքնին լուծուած է. Ի՞նչ կըսեմ. լուծուած. Տասնեակ տարիներէ հետէ եղած սակարկութիւնը աւարտած չէ դեռ, և անշուշտ այսուհետեւ ալ վախճան չպիտի ունենայ. Ռումանիա պէտք ունի հոգեւոր տեսչի, գէթ այցելուի մը, որ առանց ինչ պայմանի, և ճիշդ Քրիստոսի աշակերտի մը պէս ճամբայ ելնէ. Տխուր ճշմարիտ չէ՞ այս որ երբ կըսուի թէ Ռումանիոյ մէջ հայութիւնը կորնչելու վտանգի մէջ է, մեք հոս նստինք պայմաններու վրայ խորհինք. Ռումանիոյ հայութիւնը զառիվայրին վրայ է, ալ վարժուած է և անտարբեր այսօր կը դիտէ օտարութիւնը, ալ բան մը չ'զգար իր երակներուն մէջ, մեք պէտք ունինք այն հայութեան, մեք կը կրենք անոր օտարախորթ ըլլալու ցաւը, ուստի, ոչ միայն պայմանի պէտք չկայ, այլ և պէտք է զոհողութիւն ալ ընել, և զառիվայրին վրայ բռնել այդ պատուական հայութեան յետին մնացորդները. Կ'աղաչեմ, ի՞նչ կընեն, երբ հրդեհ տունէն կը բռնկի. սրահներ կը զարդարե՞ն, թէ ո՛չ կրակը մարելու կը փութան. Ըստ այսմ մեք կըսենք որ հրդեհը Ռումանիոյ հայութիւնը բռնած է, մեր Պատրիարքը փութայ որ առաջնորդութեան վրայ կը խորհի. Ցանուն ազգին կ'աղաչեմ Սրբազան Պատրիարք հօր, որ եթէ մեր Սրբազանն յանձն չ'առնուր, Մուրատեանց ղրկէ Հայոց Ազգին կոչմանէ. Յուսով ենք որ Ն. Սրբազնութիւնը Ազգին հրաւէրը սիրով յանձն կ'առնու, և ինքնին մեծագոյն օրինակը կուտայ. Այսպիսի կարգադրութիւն մը այլ և այլ մասամբ օգտակարագոյն է. Նախ որ Մուրատեանցի ծանօթ է այդ հայութիւնը, եւ արդէն իմ թղթակիցս ալ գրած է ինձ որ Ռումանիոյ հայերը մոռցած չեն զնա, և խանդաղատանօք կը յիշեն այն այցելութիւնը՝ զոր ըրած է Ն. Սրբազնութիւնը. երկրորդ որ Մուրատեանց մեր լեզուի ջերմագոյն սիրողներէն մին է, և կարծեմ թէ ոչ ոք աւելի քան զնա պիտի խռովի խորովի երբ տեսնէ հայ մանկտին որ իր մօր ստեանց հետ օտար լեզուն կը ծծէ. Անմիջական օգնութիւն, այս է Ռումանիոյ հայոց պահանջքն.

ՀՐԱՆԴ

16 դեկտ. 1888

Սկիւտար

ԱՄԵՐԿԻԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՆԻՒ ԵՈՐՔ, դեկտ. 1888

Ոչինչ է աւելի հաճոյական քան տալ ի խնձէ բարի վկայութիւն այնմ որ արժանի է, մանաւանդ երբ այսպիսի վկայութիւն տալով կը կատարէ մարդ երախտագիտական պարտականութիւն բարեաց համար որ կըլլան օգնութեան եւ պաշտպանութեան կողմէ խեղճ ազգակիցներու օտար երկրի մէջ.

Ահա այսպիսի հաճոյական պարտականութիւն մը կատարել կը փութամ գովելով Նիւ-Եորքի Օսմանեան ընդհանուր հիւպատոսին, Պալթաճի էֆէնտիի հաւատարիմ ծառայութիւններն առ Օսմ. Կայսերական կառավարութիւնն արդարութեամբ պաշտպանելով Օսմ. հպատակաց իրաւունքներն, եւ մարդասիրական ու հայրենասիրական ջանքերն ի նպաստ բոլոր Օսմանցւոց՝ մանաւանդ հայոց, որ պէտք ունեցած են ազնիւ հիւպատոսին օգնութեան և պաշտպանութեան.

Նիւ Եորքի ազգայինք մտօք տեսնելով ընդհանուր հիւպատոսին բարեկրօնութիւնն և բարեկամութիւնն առ կարօտեալ Հայս, մասնաւոր շնորհակալութիւն յայտնած են թէ Օսմանեան դեսպանին Մավրօեէնի պէյի՝ ի Ուաշինկթոն եւ թէ՝ Պալթաճի էֆէնտիի՝ յատուկ թղթով որոյ թարգմանութիւնն է հետեւեալը.

«Ամերիկայի Հայք Թոյլտուութիւն կը խնդրէին Ձեր Վսեմութեան ուշադրութեան մատուցանել հետեւեալ որոշումներն, որք միաձայնութեամբ ընդունուեցան ժողովոյ հօկտ. 13ի վերջին կանոնաւոր նստին մէջ.

«Նկատելով թէ Նիւ Եորքի Օսմանեան ընդհանուր հիւպատոսը, Պալթաճի էֆէնտի, մեծ ուշադրութիւն տուած է բոլոր Հայոց որ պէտք ունեցած են դիմել առ նա, եւ փութով ու արդիւնաւոր կերպով աշխատած է ի նպաստ անոնց և մեծապէս օգնած է շատերու.

«Նկատելով թէ Պալթաճի էֆէնտի ոչ միայն կատարած է ազգու կերպով իւր պարտականութիւններն իբրեւ ընդհանուր հիւպատոս առ հաւատարիմ հպատակս Նորին Կայսերական Վեհափառութեան, այլ եւ անձնապէս օժանդակած եւ նպաստած է կարօտ հայերու, ուստի կ'որոշուի, նախ թէ Հայերը երախտապարտ կըզգան Պալթաճի էֆէնտիին կարգուելուն համար այն բարձր եւ կարեւոր պաշտօնին, զոր կը վարէ հաւատարմութեամբ.

«Կը որոշուի, երկրորդ, թէ հայոց շնորհակալութիւնն յայտնուի առ Պալթաճի էֆէնտին այն բարեսիրութեան եւ աջակցութեան համար զորս ցուցուցած է մեր ազգակիցներուն.

«Կը որոշուի, երրորդ, թէ այս պաշտօնական որոշմանց օրինակները ղրկուին առ Նորին Վսեմութիւնն, Մավրօենի պէյ, Օսմանեան դեսպանն՝ ի Ուաշինկթոն, եւ առ Պալթաճի էֆէնտի». Օսմանեան դեսպանն պատասխանած է Հայոց թղթոյն ուրախութիւն յայտնելով որ վեհ. Սուլթանին հաւատարիմ հպատակ հայերը գովելի երախտագիտութիւն կը ցուցընեն օսմանեան պաշտօնէի մը ծառայութեանց յարգը ճանչնալով օտար երկրի մէջ.

Պալթաճի էֆէնտի իւր պատասխանին մէջ կ'ըսէ թէ Նիւ Եորքի մէջ գտնուած օսմանեան հպատակաց կողմանէ պաշտօնաւորական յայտարարութիւնք խորապէս յուզած են զինքն. Հիւպատոսը կը յայտարարէ թէ բնաւ ջանք պիտի չխնայէ իւր պաշտպանութիւնը տարածել ամէն կարգի օսմանեան հպատակաց վրայ՝ որք կապացուցանեն իրենց հպատակութիւնն եւ պաշտպանութեան ու օգնութեան պէտք կ'ունենան.

Պարտազանց պաշտօնակալներու դէմ գանգատելու դիւրութիւն հարկին մէջ գտնուիլ դժբաղդութիւն է. Նիւ-Եորքի Հայք, սակայն, բարեբախտ են, որ գովեստով միայն կրնան խօսիլ օսմանեան կառավարութեան ներկայացուցիչներուն վրայ այս երկրին մէջ.

* * *

ՏՕՔԹՕՌ ՏԱՏՈՒՐ

ՄԱՍՆԱԳԷՏ կոկորդի, ականջի, քիթի, բերանի և վզի ամեն տեսակ հիւանդութեանց, Վ. ԿԱՅԵԱՆ, Փարիզի Լոնտրայի և Վիեննայի նշանաւոր մասնագէտ դասատուներէ, [illegible] Եւրոպայի երեւելի հիւանդանոցներու մէջ ունեցած աշխատասիրութեամբ, Պոլսոյ վերադարձած ըլլալով, իւր բնակութիւնն հաստատած է ի Մեծ փողոց Բերայի, Թիւ 147 տունը, [illegible] Դեսպանատան, ուր ամեն օր կ'ընդունի իւր դարմանեալներն առաւօտեան ժամ 9էն մինչեւ կէսօր և կիրակիներէ զատ ամեն օր ժամ 2էն մինչեւ 5 (ը կ.) Պոլսոյ կողմը, կամուրջի դիմաց Քիւչիւքեան դեղարանն, ուր չորեքշաբթի օրերը ձրի կը դարմանէ. 7179

ԱԶԴ. Ֆրանսացի ընտանիք մը իւր գիշերօթիկ կ'ընդունի քանի մը օտարականներ.— Ֆրանսերէնի դասեր. Մասնաւոր եղանակ ֆրանսական լեզուին ուսուցման համար.

Տեղեկութեանց համար դիմել առ Պ. Պէճար Գաօ. ի Բարիզ, Իւնիվէրսիթէ փողոց, Թիւ 34, և ի Պոլիս առ Իսդըրն էֆէնտի, Քարաքէօյ, Տէյիրմէն խան, Թիւ 9. 2506

AUX VILLES DE FRANCE

Ժ. ՏԸԼՈՐՄ յաջորդ Գ. ՄԷՅՖՐԻ

ԲԵՐԱ—394, Մեծ Փողոց Բերայի,—394 ԲԵՐԱ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼԻՔԻՏԱՍԻՈՆ

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել ձեզ թէ յառաջիկայ Մարտ 3/15ին, վարձակալութեան լրանալուն պատճառաւ և ինքզինքս բոլորովին նուիրելու համար Ղալաթիոյ Մահմուտիէ Փողոցի Թիւ 3 Վաճառատանս շահագործման, որոշած եմ ջնջել Բերայի մասնաճիւղս.

Որպէսզի կարենամ ձեռքէ հանել այդ Մասնաճիւղին մէջ եղած ապրանաց ամբողջ մթերքը,

Դեկտեմբեր 5/17էն մինչեւ Յունուար 1/13 պիտի կազմակերպեմ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԵՐՈՎ ՎԱՃԱՌՈՒՄ մը ամեն տեսակ կազմուած ապրանքներու, ինչպէս

Շաքարի ամանք, Քասկք, Սպարապուշանք, Ժամացոյցք, Պղնձեայ արձաններ, Բիւրեղեայ ամաններ, Փոքր կարասիք, Պէյլէքներ, Ծխողներու յատուկ առարկայներ, Լուսանկարի շրջանակներ, Հողմահարք, Ժամագիրք, Ալպոմք, Պատկերներ, եւայլն. եւլն. եւլն.

Բոլոր գիները նշանակուած են գրուով.— ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆ.— Օսմ. ոսկին 108 ղրուշէն.

Ժ. ՏԸԼՈՐՄ ՅԱՋՈՐԴ Գ. ՄԷՅՖՐԻ

394, Մեծ Փողոց Բերայի

ԾԱՆ.— Խնդրաքնողներ գնորդ պիտի ստանան վճարահանութեան ձրի տոմսակ մը, որուն բաժիններն ի տես պիտի դրուին. 2277 12—25

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑՔ ԹԷՅԻ

ԷՄ. ՊԱԼԱՊԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԱԾՈՒՄՆ

Չինաստանէն, Հնդկաստանէն եւ Ճաբոնէն

12 — Պոլիս, Ճէլալ պէյ խան, — 12

Իւզիր Էֆէնտիի վաճառատանց դիմաց

ՆԵՐԱԾՈՒՄՆ—ԱՐՏԱԾՈՒՄՆ

Քանի տարիէ ի վեր Թէյի մեծաքանակ առեւտուր ընելով, դրամագլխով զրկելով զայնս ի Ռուսիա և Պարսկաստան, բազմաթիւ անձանց խնդրանաց վրայ որոշեցինք քաղաքիս մէջ Թէյի կեդրոնական վաճառատուն մը հաստատել «մեծաքանակ» եւ «փոքրաքանակ» վաճառման համար. Վաճառականք, դեղավաճառք, Նպարավաճառք եւ ընտանիքներն, որք վերահաս ձմրան պատճառաւ իրենց պաշարը կը պատրաստեն, եւ անոնք որ կ'ուզեն ոչ միայն լաւ, հապա նաեւ «աժան» թէյ ունենալ, կը հրաւիրուին այցելել «Թէյի մեծ մթերանոցներն» եւ գոհ պիտի մնան. 2187

Ցուփերուն վրայ պահանջել Էմ. Պալապանի եւ Ընկ. ստորագրութիւնն եւ Աքաղաղի պատկերն.

ԴԵՂԱՐԱՆ Վ. ՍԻՆԱՊԵԱՆ

ԻՔԻ—ԳԱՓՈՒԼՈՒ

Կ. Պոլիս Պանճէ-գափու Թիւ 32

Սոյն առաջնակարգ դեղարանին մէջ, որ հաստատեալ է 135 տարիներէ ի վեր ի Կ. Պոլիս, այս անգամ եւս բերուած են յատկապէս Եւրոպայէն ամեն տեսակ ամենալաւ և նոր դեղեր, որք կը պատրաստուին ամենայն ուշադրութեամբ և չափաւոր գներով. Անդ կը գտնուին նաեւ պատուական մասնադեղեր (spécialités), հանքային ջուրեր, Նորվեկիոյ ձկան իւղեր, ևլն.

Դեղարանս կը յաճախեն հետեւեալ մեծարգոյ բժիշկներն.

Տր. Կ. Նորատունկեան էֆէնտի, ամեն երեքշ. հինգշ. և շաբաթ ժամը 7—9 որ կը դարմանէ ամեն տեսակ հիւանդութիւններ, մասնաւորապէս եւ կը կատարէ վիրաբուժական գործողութիւնք.

Տր. Օննիկ Գափամաճեան էֆ., մասնագէտ կանանց հիւանդութեանց, որ կը գտնուի ամեն բշ. դշ. և շբ. ժամը 8—10.

Տր. Պ. Սառաքեան, մասնագէտ կոկորդի և ականջի հիւանդութեանց և կը գտնուի ամեն բշ. դշ. և ուրբ. ժամը 8—10.

Աղքատաց համար խորհրդակցութիւնք ձրի են. Տնօրէն և պատասխանատու

ԳՐԻԳՈՐ Կ. ԹՕՓՈՒԶԵԱՆ

ԱՂՕԹԱԳԻՐՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՓՈՔՐԱԴԻՐ

ԸՍՏ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԳԻՆ, ԱԶՆԻՒ ԼԱԹԱԿԱԶՄ 3 ԴԱՀ.

ՆՈՅՆ ԸՆՏԻՐ ՈՍԿԵԶՕԾ 4 ԴԱՀ.

174 երեսներէ բաղկացեալ այս Աղօթագիրքը կը պարունակէ առաւօտու, ի ժամու Ս. Պատարագի եւ ի գիշերի բոլոր աղօթքներն, զորս կը զարդարեն 52 պատկերներ պատշաճապէս յարմարցուած. 2050

ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԿԱՂԱՆԴԻ ԱՌԹԻՒ

ԺԱՄԱՑՈՅՑԻ ՑՈՅՑ ՃԱՇԱԿԱՒՈՐ ՇՂԹԱՆԵՐ ԵՒ ՆՈՐԱՁԵՒ

ԱՊԱՐԱՆՋԱՆՆԵՐ

ԿԱՏԱՐԵԱԼ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՈՍԿՒՈՅ

ԱՆՓՈՓՈԽԵԼԻ ԱՆԶԱՆԱԶԱՆԵԼԻ

Ապահովեալ 15 տարւոյ համար

Դիմել առ Սէլվաճեան էֆէնտի, ի Մահմուտ-փաշա Թիւ 244, ուր կը գտնուի նաեւ 45 ղրուշի անհաւատալի գնով Նիքէլ՝ ինչպէս նաեւ տարօրինակ աժան գներով ոսկի և արծաթ խիստ սիրուն ժամացոյցներ.

2266 7—12

ՄՍԻ ՃՇՄԱՐԻՏ ՀԻՒԹ

LIEBIG

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Ի ՖՐԷՅ-ՊԷՆՏՈՍ

Որ 1867էն ի վեր արժանացած է Միջազգային ամեն ցուցահանդէսներու մէջ ամենէն բարձրագոյն վարձատրութեանց. Մեծ դիւրութիւն և խնայողութիւն. Վայրկենական պատրաստութիւն արգանակի, և ապուրի, համեմի, բանջարեղինաց համը բարեխառնելու գերընտիր միջոց.

Հիւանդաց և ապաքինելոց համար կազդուրիչ դեղ.

Պահանջել այս ստորագրութիւնը J. v. Liebig կապոյտ մելանով. 2141

Մեծաքանակ կը ծախուի գործակատարաց քով, ՆԷՆՆԻ ԲԻԼԼ և ընկ. Կ. Պոլիս, Թիճարէթ խան, Թիւ 4. Կը ծախուի նաեւ ուտելեաց վաճառականներու, դեղավաճառաց, նպարավաճառներու քով և այլն

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Տիրէքի ասկէրի չուլուպաթը իլէ իմալինը ասքէրիյէյէ պիր սէնէ զարֆընտա լիւզումի հալինտէ թէֆսիլ գըլընմագ իւզրէ ալընաճագ իւքէնտէրիյէ հասըրընըն պէհէր մուրապպա մէթրօսը ալթը ղուրուշ օն բարա վէ Թունուս հասըրընըն տախի պէշ ղուրուշ օթուզ փարայա թալիպի զուհուր էթմիշ օլուպ քեանունի էվվէլին [illegible] կիւնի պիլ միւնագասա գարարը գաթիյէսի վիրիլէճէքինտէն իթթալը թալիպ օլանլարըն մագամը սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

15 Քեանունի էվվէլ 1888 2255

Նօ. 18 3—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Նիզամիյէ էրզագ անպարը իչուն միւպայաա օլունաճագ էվվէլճէ իլան գըլընան պէշ [illegible] օգգա գաշվէնին քեանունի էվվէլին [illegible] սալը կիւնի գարարը գաթիյէսի վիրիլէճէքինտէն իթթալը թալիպ օլանլարըն մագամը սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր.

15 Քեանունի էվվէլ 1888 2256

Նօ. 19 3—3

AU CROISSANT ‖ Օ ԳՐՈՒԱՍԱՆ

94, Նիւքսէք Գալտըրըմ, Վոյվօտայի դիմաց, 94

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ,

Մեծ վաճառահանդէս հանդերձեղինաց, չափազանց զեղչեալ գներով ֆր-նք

Ձմրան բալթօ, մէջը Փանէլայով, վայելուչ ձեւ, լաւ կարուած	25
Գաւաթոր Բալթօ, մէջը Փանէլայով, չինական սնդուսէ	28
Արանց բալթօ բոլոր բուրդէ, սքանչելի ձեւ	40
Աստրաքան բալթօ մէջը մետաքս կամ Փանէլա, շատ վայելուչ	40
Բալթօ էնըլէզ, վերջին նորաձեւութեամբ, շատ վայելուչ	32
Ֆըրգէ բալթօ, բոլոր բուրդէ, որ ուրիշ տեղ 60 Ֆրանքի կը ծախուի	50
Տղայոց գաղդոր բալթօ 12էն 18 տարեկանի համար	18
Արանց հաստատուն և վայելուչ բանդալօն սկսեալ	8
Բանդալօն, ճարտար և վայելուչ կարուածքով	15
Ռօպ տը Շամպը, ճիշդ արժէքովը վաճառուող, իբր վաճառատան ռէքլամ	19
Փօսթիւմ, արտընեայ, բոլոր բուրդէ, վայելուչ	50
Պանժուա ժիլէ սեւ գոյն, շատ վայելուչ, բրդէ	32
Ձմրան փօստիւմ, վայելուչ և հաստատ, սկսեալ	25

1506

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

"ՖԻՆԻՔՍ"

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է որոյ բաժնետարք Անգղիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրներ են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 16,000,000 Անգղ. ոսկոյ գումարն զոր յարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 1799

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոյս, որք ունինք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍԻՄԱՆ և ԸՆԿ. միակ գործակալք ի Պոլիս և ի Շրջակայս
Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերև։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ և ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆրանք	8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1888	»	4,817,262
Տարեկան հասոյթ » » »	»	10,069,700

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆրանք 6,250,000 Պահեստի դրամ Ֆրանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւաց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է Եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 Ֆրանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Եօւլիւտօս խան.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եւրոպեան առաջնակարգ դրամատուներ ցոյց պիտի տրուին անոնց, որք Ընկերութեանցս վերայ տեղեկանալ կը փափաքին։ 2176

ROWLANDS' TOILET

ԵԶԱԿԱՆ ապրանքներ, որոց հանքային և ձնասակար նիւթերէ զերծ լինելն ապացուցուած է

Rowlands'
Macassar Oil
աւագոյն դարմանն է հերաց աճման համար և հիանալի աճում մը կուտայ անոնց։

Rowlands'
Kalydor
ակլիչ եւ մեղմիչ կաշի երեսի համար, կը ջնջէ ամեն տեսակ բիծերը, փշտիկները, եւ մորթը կակուղ ու փափուկ կ'ընէ։

Rowlauds' odontio, ակռայ մաքրելու համար, ակռաները կ'սպիտակցնէ եւ կ'արգելու փտումը։ Ամեն լաւ դեղավաճառաց եւ հոտավաճառաց քով հարցուցէք Rowlands'ի ապրանքները, 20, Հաթըն Կարտըն, Լոնտոն, եւ զգուշացէք աժանագին կեղծերէն որք վնասակար եւ ապարդիւն են։

Կ. Պոլսոյ մէջ գործակատարք են Պ. Պ. Քանզուք եղբարք, Բրիտանիական դեղատուն։

1507 24—26

ԽԱՐԻՍԽ

ԿԵՆԱՑ և ԵԿԱՄՏԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Ի ՎԻԵՆՆԱ Հաստատեալ 1858 ին

1887 Դեկտեմբեր 31ին երաշխաւորեալ հասոյթն էր Ֆր. 86,699,959,12.
Ամբողջութիւն ապահովեալ գումարոց » 408,448,921,35.

Ապահովագրեալ տուող անձինք մահուան պարագային մէջ տարեկան բաժիններէն % 25 շահ կ'ընեն։

Ապահովագրեալ տուող անձինք կենաց պարագային մէջ ապահովագրեալ դրամագլուխներէն մինչեւ 41 ½ % շահ կ'ընեն։

ԽԱՐԻՍԽ ընկերութեան կատարած գլխաւոր գործողութիւնք են.

Ա. Ապահովագրութիւն մահուան պարագային մէջ, Օրինակ.

35 տարեկան անձ մը 286 Ֆրանքի տարեկան բաժին մը կը վճարէ իւր ժառանգորդաց ապահովելու համար 10,000 Ֆրանքի դրամագլուխ մը, վճարելի իւր մահուանէն յետոյ և որ իրեն իրաւունք կուտայ շահուց մասնակցիլ իւր ապրած միջոցին։

Բ. Ապահովագրութիւն կենաց պարագային մէջ (Օժիտքը) Օրինակ։

Մէկ տարեկան եղած միջոցին ապահովագրեալ տղայ մը քսան տարի յետոյ 10,000 Ֆրանքի դրամագլուխ մը պիտի ստանայ. ասկէ զատ, պիտի մասնակցի Ընկերութեան 85 % շահուց՝ 298.30 Ֆրանք տարեկան բաժնոյն փոխարէն։

Ժամանակից օժտի համար ապահովագրելոց շահուց մասն եղած է վերջին երեք տարիներուն համար 37 %, 34.12 % և 41 ½ %։ Այսպէս ապահովագրեալ 1000 Ֆրանքին վրայ, 4.5 Ֆրանքի շահաբաժին առաջած են վերջին բաշխումէն։

Զնջին մրցանակի մը միջոցաւ, կարելի է երաշխաւորել նաեւ վճարուած գումարներն, եթէ մահ պատահի։

Տեղեկութեանց համար դիմել առ ընդ. Գործակատարն Պ. ԼԻՕՆԷԼ ՊՈՆՏԸ։
Գրասենեակք, Թիւնէլի հրապարակ, տուն Մայէրի, երկրորդ յարկ

Ընկերութեան սեղանաւորն է Պ. Ս. ԱՏԼԷՐ 1819

6—6

ՄԸՍԹԸՍ Ս. Ա. ԱԼԼԸՆԻՆ

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿԱՆ ՄԱԶ. ՆՈՐՈԳԻՉԸ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Ճերմակ ինկած մազերուն գոյն, վերնիշ ու գեղ կուտայ։ Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը։ Գլխու թեփը շուտ մը աներեւոյթ կ'ընէ։ Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի։

"Մէկ շիշը կը բաւէ։" Այդ փորձը ունեցան ամենքը որոնց մոխրագունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան։ "Ներկ չէ, և ամենևին զեան մը չըներ։" Եթէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր Միսիս Ս. Ա. Ալլէնի Աշխարհահռչակ մազի նորոգիչէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Փարիզ ու Նիւ-Եօրք։ Կը վաճառուի ամեն սափրիչներու, անուշ բուրգործներու և անգղիացի դեղագործներու քով։

Կը վաճառուի Մ. և Ն. Քանչիւր եղբարց Բրիտանիական դեղատունը, 435 Մեծ փողոց Բերա, Լամիա Քարագէօզ, Ղալաթիա, Ֆիւսէյ Ճօսուքի 95 և 97. Բեշիքթաշ Եղբարց քով 77 Էմին Էօնիւ—, 51 Էլէկի ճամի և 168 Մեծ փողոց Բերայի, և Եդիմօրի քով Բերա Մեծ փողոց թիւ 428. 2278

Այն անձինք
որ կը ճանչեն
DEHAUT ՏԸՀՕ.
ԴԵՂԱՀԱՏԵՐԸ
իրենց ստամոքսը մաքրելու համար լոկ այդ դեղահատերը կը գործածեն, որք ո՛չ նողկանք եւ ո՛չ յոգնութիւն կը պատճառեն, որովհետեւ հակառակ միւս մաքրողական դեղերուն, այս դեղն այն ատեն միայն կը ներգործէ երբ լաւ կերակրոց և կազդուրիչ ըմպելեաց հետ առնուի, ինչպէս գինի, խահուէ, թէյ։ Ամեն ոք կ'ընտրէ իրեն յարմար ժամն, ըստ իւր զբաղմանց։ Դեղն յոգնութիւն չպատճառեր բնաւ. այնպէս որ մարդ սիրով կ'ուզէ գործածել։

ԼՈՒՍԱՆԻՏՈՒԹԻՒՆԸ
ՋՂԱՅԻՆ ԴՈՂԴՈՋՈՒՄՆԵՐԸ
ԵՒ ԲՈԼՈՐ
ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ապահովապէս կը բուժին
ԺԷԼԻՆՕԻ ՇԱՔԱՐԱՀԱՏԵՐՈՎ
DRAGEES GELINEAU

Ճաշին մէջտեղն առնլու է դեղս. առաջին շաբթու օրը երկու, երկրորդ շաբթու օրը չորս, այսպէս շաբաթն երկուք աւելցնելով մինչեւ որ տագնապները դադրին։

Ժ. ՄՈՒՍՆԻԷ ԵՒ ԸՆԿ. ի Սօ, մերձ ի Բարիզ

Պատասխանատու Ս. ՏԸՄԱՍԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ՀԱԶԻ, ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ, ՊՐՈՆՇԻԴԻ, ՀԱՐԲՈՒԽԻ, ՑՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՁԱՅՆԻ ԿԵՐԿԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

POWELL'S BALSAM OF ANISEED.
TRADE MARK.

ՇՆՉԱՓՈՂԻ ԵՒ ԽՈՉԱՓՈՂԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ դէմ իբր ապահով դարման այս դեղին վայելած համբաւը միշտ կը հաստատուի այն բազմաթիւ նամակներով զորս Պ. Բոուէլ կ'ստանայ անոնցմէ որք գործածած և ճանչցած են նորա յատկութիւնները։

«Անգլիոյ Թագուհւոյն ՆԷԳԻԼԻ Թնդանօթակրոյն վրայ, ի Ռուֆք, Սկովտիա.

«Սիրելի պարոն. Ըստ որում կը նեղուէի յամառ հազէ մը որ գիշերը կ'արգելուր ինձ քնանալ և ցերեկհանգիստ անցունել, վ.սեմ. կոմս Քարլթնէս յանձնարարեց ինձ գործածել ձեր անզուգական բալասանէն անխտիր հատիկներով և կրնամ հաւաստել ձեզ թէ առաջին գործածութենէն իսկ զգալի բարւոքում կրեցի, առանց իսկ պէտք ունենալու գործերս դադրեցնելու, և առաջին փոքր սրուակը բոլորովին բուժեց զիս՝ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն այլոց.

(Ստր.) Վ. ԼԻՆՉԷԼ, Նէգլի Թնդանօթակրէն.

Կը վաճառուի ամեն դեղատանց և արտօնեալ դեղերու վաճառականաց քով, շիշը 1 շիլին ½ բէնսի, 2 շիլին 3 բէնսի և 11 շիլինի։—Պատրաստեալ ձեռամբ ԹՈՄԱՍ ԲՕՈՒԷԼԻ, 4, Ալպիոն Բալէյս, Պլաքֆրիէրս րօտ, Լոնտոն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պոլկարիոյ ներկայացուցչին քով

2167 Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ
Անգլիական Ընդհանուր Մթերանոց, Վոյվոտա, պահականոցին քով, կայարան Թրամուէյից, 95 և 97

Ջուր, փոշի և խմոր ԱԿՌԱՅԻ ՀԱՄԱՐ

DOCTEUR PIERRE
Բարիզի Բժշկական համալսարանէն
8, Place de l'Opéra PARIS

Կը ծախուի բոլոր դեղավաճառաց, դեղագործաց, հոտավաճառաց և վարսայարդարաց քով։

1522

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՌԼԸՄԱՆ ԵՒ Պ. ՌՈՒՄՊԼԸՐԿԻ

Ղալաթիա Պէյլիք Մէյլէթ խան, միջազգային Թղթատարատան վրայի յարկը

Սոյն վաճառատան մէջ խիստ աժան գներով կը վաճառուին ամեն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրկնոցներ, տղայոց համար հագուստներ, կէս շրջազգեստներ, քօռսէներ, օժտի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, Թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ։

Այս ապրանքներ, որոց ամենքն ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին թէ՛ փոքր և թէ մեծ քանակութեամբ։

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիէննայի և Պերլինի յառաջ գործարանաց մէջ, Նոյնպէս Անգլիական, Իտալիական և Եւրոպական ուրիշ երկիրներէ ևս ապրանքներ կը բերուին։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարէնը փոխանակագրով և կամ Թղթատարական դրամով ղրկուի։

Չը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և սակայն ետ կը տրուի ղրկելով փոխադրութեան ծախքը։ 1180

ՄՈԴԱԿԱՆ ՆԵՐԿ



Նոր գիւտ մ'է այս մազերուն գոյնը փոխելու համար մէկ երկու անգամէն, առանց ուրիշ ո և է նիւթի գործածութեան կամ լուացքի,

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՅՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՍԵՒԻ

Այս նոր ներկը բաղկացեալ է միայն արմատներու և խոտերու նիւթէ։ Սպիտակ կամ կարմիր մազերն անմիջապէս կը փոխուին պայծառ շագանակագոյնի կամ թանձր սևի։

Փորձը ցոյց տուած է թէ այս ներկն ո՛րչափ գերազանց է նմանօրինակ ուրիշ պատրաստութիւններէ։ Իր առաւելութիւնն է մազերուն ամենէն բնական երևոյթը տալ և ամենէն ուշադիր գիտողն ի դերև հանել։ Կը կասեցնէ հերաց անկումը, գլուխը կը մաքրէ, թեփը կ'անհետացնէ և նոր ոյժ կուտայ մազային մարմին։ Ուշադրութեամբ կարդալ

ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Սրուակը երերցնել գործածելէ առաջ և փոքր քանակութեամբ հեղուկէն դնել սկաւառակի մը մէջ, յետոյ բարակ սղտիկ սանտրով մը կամ սպունգ հեղուկին մէջ թրջած լապունգով մը թեթև կերպով մազերուն վրայ անցունել զայն, այնպէս որ ամբողջ մազերը թրջին։ Ապա գլուխը բաց պահել մինչեւ որ հեղուկը չորնայ։ Բոլոր մազերը մէկ հեղլալով, ոմանք մէկ երկու գործածութեան պէտք ունին, այլոց համար մէկ անգամը բաւ է։ Եթէ մէկ երկու անգամէն աւելի գործածուի, գոյնն աւելի թուխ կ'ըլլայ։ Անգամ մը որ ուզուած գոյնը ձեռք բերուած է, զայն տարիներով պահելու համար կը բաւէ երեք չորս շաբաթն անգամ մը հեղուկէն գործածել։ Նոյն եղանակը գործածելու է մօրուքին և պեխերուն համար։ Պէտք չէ որ գլուխը լուալ՝ գործողութենէն առաջ կամ ետքը։ Նախապէս [illegible] վերջին օրերն և ձեռները լուալու է առ ի զգուշութիւն։

ԾԱՆ. Եթէ ուզուած գոյնը ձեռք չբերուի մէկ երկու գործողութենէ ետք, գլուխը լուալու է [illegible] մը, ապա գլխուն քսելու է այս ներկին մէջ թեթևապէս թրջած սպունգ մը, և ուզուած ազդեցութիւնն յառաջ կուգայ անմիջապէս։

ԿԵՂԾԵՐԷՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ.

Միակ կեդրոնատեղի ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ, Վոյվոտա, Պահականոցին քով, կայարանն Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 2166

ՄԻԱԿ ՄԹԵՐ ՆՈՅՆ ԳԱԼՈՐԻՖԵՐՆԵՐՈՒ



ՌՈՒԹ ԿԼՓԻՒՐՁ ՎԻԷՆՆԱ

Հ. ԼԱՆԺ

24, Բէյլէրպէյ փողոց, 32, Մահմուտիյէ փողոց

ՎԱՌԱՐԱՆՔ ԵՒ ԾԽՆԵԼՈՅՉՔ
Նորագոյնեան առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ՔԻՒՐԻՆԵՐ
Կրակարանի վերաբերեալ մանր առարկայք

ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԻՆԵՐ
(Պղնձէ, ձուլածոյ և թիթեղէ երկաթէ)

ԵՐԿԱԹԵԱՅ ՄԱՆՐ ԳՈՐԾԻՔ
Ամեն տեսակ գործիք—Նկարուած անիւթէ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ
Տատանոցք-Կշռորդք-Ցորենի կշռորդ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԱՆԱԿՆԵՐ

ՃՈԽ ՀԱՒԱՔԱԾՈՅ ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ



ՑԱԽՃԱՊԱԿԻԷ ԹԱՓԾՈՒԷ ևն.

ԲՐԻՍԹՈԼԻ Է ՌՍԻԵՐՁԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 676

NUBIAN
BLACKING
Produces a
POLISH
without
Brushing
Equal to
PATENT
LEATHER
On BOOTS, SHOES
And
LEATHER GOODS
NUBIAN
IS WATERPROOF

ՆՈՒՊԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Խիստ յարմար է ներկելու համար կօշիկներն որք առաջին անգամէն կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլն, որ նմանը չունի պայծառութեան մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տևէ։ Կօշիկներն անթափանցելի կ'ընէ ջուրի և խոնաւութեան։ Տիղմը կամ ուրիշ աղտեղութիւնները դիւրաւ կը վերցուին թացած լաթով մը, առանց փոխելու ներկին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը յարմարի այրանց և կանանց ամեն տեսակ կօշիկներու։ Կարելի է գործածել զայն՝ նորոգելու համար ճամբորդութեան կաշէ սնտուկները։

Գործածման եղանակ. Ներկելի առարկայն խնամով սրբել, այնպէս որ հին ներկէն հետք չմնայ։ Ապա փայլուն հեղուկէն քսել, կա՛մ սպունգի կտորով մը կա՛մ վրձնով։ Թրջուած մասերն այնքան իրենն կը չորնայ։

Զգուշանալ կեղծերէն.

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա, Պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 2168